

## ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

**ԱՌԱԲԵԼԱԲԱՐ ԽՕՍԻՆՔ  
 ՀԱՅ-ԹՈՒՐԲ ԵՒ  
 ՀԱՅ-ԱԶԵՐԻ  
 ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ...**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Մեր նախորդ համարով անդրադարձած էիմք ՀԲԸՄ-ի Ասպետներու Համախմբու միջատուկ հրաւերով Լոս Անճելես ժամանած ԱՄՆ-ի պետական ֆաղափազ Էտուրրո ձեռնարկի՝ Փաստափնայի, համաճարման միութեան Վաչէ Եւթամար Մանուկեան Կեդրոնէն Գերս, հայկամայնիին հետ ունեցած «Երեկոյ մը Դեսպանի մը Հետ» վերտարութեան տակ դրուած հրապարակային ելոյթ-հանդիպման մասին, որ տեղի ունեցած էր Ուրբաթ, Հոկտեմբեր 2012, Կ.Վ. Ժամը 5-ին: Այդ առնչութեամբ, դիտել տուած էիմք, թէ յաջորդ, այսինքն մեր այսօրուան համարով, պիտի անդրադառնալիմք ելոյթի մանրամասնութիւններուն մասին:

Թունուողի մէջ տեղի ունեցած համալսարանական մասնագետ ուսանող գործազուրկի մը, ոստիկանի մը կողմէ ստացած արժանապատուութեան վիրաւորանքի որպէս հետեւանք իմ ֆանտազիական մտով ծնունդ առած էր «Արարական Գարուն»ը: Այդ անձնական ու տարեբային պատմառով ստեղծուած շարժումը, որ տակաւ կը տարածուի՝ իր ցանցին մէջ առած էր սուրբական ասպնջական հայրեմիքը: Էտուարտ ձեռնարկ, որուն կողմնորոշուածութիւնը անշուշտ յստակ է, իր պրիսմային տակ առաւ «գարնանային» միշտ շարունակման ենթակայ յեղափոխութիւններու դրդապատմառններն ու անոնց լուծման հնարաւոր կարելիութիւնները:

Յեղափոխական նախապատրաստական միջոցառումներէ, ֆաղափազ կազմակերպութիւններուն առաջնորդութեան, կրօնական դոյզն կողմնորոշումներէ, Եւթամարաւորարար յստակ ծրագրէ մը գուրկ ըլլալը հաստատուած ըլլալով՝ «Արարական Գարուն»ը, սկսած էր փոքրիկ մասնաւորապէս Միջին Արեւելքը:

Երիտասարդութիւնը հանդէս կուգար յարձանուտ ըմբոստութեամբ մը: «Բեաֆի» (ալ կը բաւէ) պիտի ըսէր Պրն. դեսպանը, բացատրելու համար գայրոյթը՝ ֆաղափազային հրապարակներ հաւաքատեղի դարձուցած Եւթամարաւորարարութեան իմ ֆանտազիական երիտասարդութեան իմ ֆանտազիական գարնանը: Պէտք էր վերջ տային իրենց երկիրներու մէջ միահեծան ընկերա-ֆաղափազ կեդրեփէ կարգավիճակին: Վերջ տային բոնատիրութեան, գործազուրկութեան, ֆիզիկական անապահովութեան, բշուտութեան Եւթամարային անարդարու-

## ՍԴՅԿ ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻՆ

Նոյեմբեր 6-ին Ամերիկայի ժողովուրդը պիտի ուղղուի քուէատուկ, ընտրելու համար իր յաջորդ նախագահը: Այս առթիւ ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը իր գորակցութիւնը կը յայտնէ նախագահ Պարաք Օպամայի ընտրապայքարին ու կոչ կ'նէ Ամերիկահայութեան՝ քուէարկելու յօգուտ անոր վերընտրութեան:

Դեմոկրատ Պարաք Օպամայի գլխաւոր մրցակիցն է Հանրապետական Միթ Ռամսին: Վերջին տարիներուն այդ կուսակցութիւնը սկսաւ թեքիլ աւելի ու աւելի դէպի աջ, դառնալով ծայրայեղ պահպանողական կուսակցութիւն մը ու կորսնցնելով իր նախկին դիմագիծը: Միթ Ռամսինի նախապէս վարելով Մասաչուսէթց նահանգի կառավարչի պաշտօնը, կը ներկայանար որպէս չափաւոր քաղաքական գործիչ: Հանրապետականներու թեկնածուն դառնալու համար, ան փոխած է իր նախկին տեսակէտները, զանոնք պատշաճեցնելով իր կուսակիցներու տնտեսական, հարկային, ընկերային եւ քաղաքական գաղափարներուն, որոնք չեն բխիր ժողովուրդի մեծամասնութեան շահերէն, աւելի շատ կը ծառայէն ունեւոր դասակարգի «մենաշնորհներու» պահ-



Նախագահ Պարաք Օպամա

պանման եւ ապակայունացում կը յառաջացնեն միջազգային գետնի վրայ:

Չորս տարի առաջ Պարաք Օպամա ստանձնեց իր պաշտօնը, իր նախորդէն՝ Ճորճ Պուշէն Ժառանգելով քայքայուած տնտեսութիւն մը եւ երկու երկարատեւ պատերազմներ: Առաջին հերթին ան յաջողեցաւ առաջը առնել տնտեսական անկումին, շրջեց անգործութեան ընթացքը, ստեղծելով միլիոնաւոր նոր աշխատատեղեր: Այս բոլորը ան իրագործեց,

հակառակ հանրապետականներու որդեգրած խանգարիչ դերին: Նախագահ Օպամա, առաջինը ինք կը գիտակցի որ տակաւին երկար ճամբայ կայ կտրելիք՝ տնտեսութիւնը իր նախկին վիճակին վերադարձնելու ու ժողովուրդի վստահութիւնը ապագայի նկատմամբ վերականգնելու համար:

Առողջապահութեան եւ ընկերային ապահովութեան ծիրէն ներս նախագահ Օպամա մշակեց բազմաթիւ նոր օրէնքներ, որոնք եկան մեղմելու տնտեսական անկումի հետեւանքները՝ միջին եւ աղքատ դասակարգներուն համար: Քառասուն միլիոն ամերիկացիներ, որոնք ցարդ առողջապահութեան ապահովագրութիւն չուէին, 2013 թուականէն սկսեալ պիտի կարողանան ապահովագրութիւն ձեռք ձգել:

Նախագահ Օպամա օգտագործելով սահմանադրական իր իրաւունքները, անօրինական գաղթականներու զտակներուն համար սահմանեց օրէնքներ, այդ երիտասարդներուն տալով օրինաւոր կարգավիճակ:

Արտաքին քաղաքականութեան ծիրէն ներս, նախագահ Օպամա յարգելով իր նախընտրական խոստումը, ամերիկեան զոր-

## ՀԱՆԳԻՍՏ՝ Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Հոկտեմբերի 12-ին Երուսաղէմում երկարատեւ հիւանդութիւնից յետոյ կեանքի 93-րդ տարում ի Տէր ննջեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագոյն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու ողջ եկեղեցական դասը սգում են բազմավաստակ Պատրիարք Սրբազան Հօր մահը՝ աղօթելով, որ Տէրը Սուրբ Հոգու միխիթարութիւնը պարգեւի հաւատաւոր մեր ժողովրդին եւ իր խնամքի եւ օրհնութեան ներքոյ պահի Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը եւ նրա գինւորեալ միաբանութիւնը:

Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանը ծնուել է 1919 թ. Փետրուարի 16-ին, Պաղտատի հիւսիսում (Իրաք)՝ Պագուպա քաղաքի մօտ գտնուող փախստականների ճամբարում: Պաղտատի Սրբոց Թարգմանչաց հայկական դպրոցում նախակրթական ուսումն աւարտելուց յետոյ ընդունուել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց ժառանգաւորաց վարժարան:

1936 թ. Օգոստոսի 2-ին սարկաւազ է ձեռնադրուել ձեռամբ երջանկայիշատակ Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակ-



Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեան

եանի: 1939 թ. Յուլիսի 23-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ ստանալով Թորգոմ անունը:

1939-46 թթ. Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանում տարբեր պաշտօններ է վարել. աշխատել է Պատրիարքարանի »Սիոն« ամսագրի խմբագրութիւնում, ինչպէս

## ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի իշխանութիւնները հաստատակամ են ֆետրուարին կայացնել ազատ, արդար ու ժողովրդավարական ընտրութիւններ՝ նկատի առնելով Մայիսին միջազգային դիտորդներու ներկայացուցած առաջարկները: Այս մասին յայտարարեց նախագահ Սերժ Սարգսեան, Պառլամենտի մէջ կայացած՝ Եւրոպական ժողովրդական կուսակցութեան (ԵԺԿ) համագումարի ընթացքին, որուն անդամ է նաեւ Սարգսեանի գլխաւորած Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը:

«Գարնանը Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրութիւնները միջազգային դիտորդների կողմից որակուեցին որպէս լաւագոյնը՝ անկախութեան հռչակումից ի վեր: Հայաստանի իշխանութիւնները հաստատակամ են գրանցուած առաջընթացը դարձնելու հաստատուն միտում եւ առաջիկայում անցկացնելու ազատ, արդար, թափանցիկ եւ ժողովրդավարական նախագահական ընտրութիւններ: Այդ նպատակով ձեռնարկուած են նախապատրաստական միջոցառումներ՝ հիմք ընդու-



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿՎԱՃԱՌՈՒԻ՞

## ՋԷՅՄՍ ԹԱԿՈՐԵԱՆ

«Հայրենակիցներ» ծրագիրը չի կարող իրականացուել Հայաստանի կամ քին հակառակ: Հոկտեմբերի 12-ին յայտարարել է Հայաստանի փոխարտգործնախարար Շալալ Քոչարեանը, Երևանում կայացած հայ-ուսումնական միջկառույց փարական յանձնաժողովի նիստից յետոյ պատասխանելով լրագրողների հարցերին: Միջկառույց փարական յանձնաժողովի նիստի արդիւնքով ստորագրուել է արձանագրութիւն, այդ թւում «Հայրենակիցներ» ծրագրի մասով:

«Արձանագրութեան մէջ յստակ նշուած են կողմերի դիրքորոշումները. Ռուսաստանը շահագրգռուած է ծրագրի շարունակութեամբ, իսկ Հայաստանը կտրուկ դէմ է», յայտարարել է Շալալ Քոչարեանը: Նրա խօսքով, ծրագիրը չի կարող իրականացուել, երբեք Հայաստանի յստակ դիրքորոշումից:

Կարելի է իհարկէ հիանալ եւ ծափահարել պաշտօնական Երևանի այդ սկզբունքայնութեանը, բայց Շալալ Քոչարեանը առաւել կոնկրետ հարցադրումները չի մեկնաբանել: Օրինակ, նա չի ասել, թէ յատկապէս երբուանից է դադարելու «Հայրենակիցներ» ծրագիրը Հայաստանում:

Ստացուում է, որ Հայաստանն այդ հարցը պէտք է քննարկի Ռուսաստանի հետ: Այսինքն, ծրագիրը դադարեցնելու հարցը իրականում դառնալու է հայ-ուսումնական բանակցութեան առարկայ, ինչպէս ասենք գագի շուրջ են կողմերը

## բանակցում:

Ընդ որում, չի բացառուում, որ այդ երկու բանակցութիւնները նաեւ սերտ շղկապուած լինեն միմիանց հետ: Այսինքն, Հայաստանն ի վերջոյ համաձայնի որեւէ կերպ «Հայրենակիցներ» ծրագրի շարունակութեանը, որոշակի փոփոխութիւններ կատարելով ձեւաչափում, իսկ դրա դիմաց ակնկալելով, որ Ռուսաստանը չբարձրացնի, կամ կտրուկ, կամ շատ չբարձրացնի Հայաստանին մատակարարուող գագի գինը:

Բանն այն է, որ եթէ գագի գինը բարձրանայ, ապա Հայաստանից կարող է հայէս բարձրանալ նաեւ արտագաղթի թիւը, կամ էլ եթէ չբարձրանայ, ապա կտրուկ կը բարձրանայ սոցիալական բուռնի հեռանկարը:

Այդպիսով, քանի դեռ Հայաստանի իշխանութիւնը խուսափում է կոնկրետ խօսել «Հայրենակիցներ» ծրագրի փակման ժամկետների մասին, թերեւս կարելի է ենթադրել, որ այստեղ իսկապէս Ռուսաստանի հետ բանակցութիւն կայ, որի արդիւնքում պարզապէս Հայաստանի քաղաքացիները կարող են «վաճառուել» Ռուսաստանին կամ «փոխանակուել» գագով:

Այլապէս, մեղմ ասած տարրինակ է, երբ Հայաստանը կտրուկ դէմ է արտայայտուում ծրագրին, սակայն ասենք չի յայտարարում, թէ ինքն օրինակ պահանջում է որ ծրագիրը դադարեցուի ասենք 2013 թուականից, կամ 2012 թուականի Դեկտեմբերից, կամ որեւէ այլ ժամկետից:

«ԼՐԱԳԻՐ»

# «ԼԱԻ ԷԼԻ, ՊԱՊ, ՄԻ ՔԻՉ ԷԼ ԵՍ ԽԱՂԱՍ»

## ՄԱՐԻՆԱ ԲԱՂՎԱԳԻԻԼԵԱՆ

Նախագահական ընտրութիւնները քիներիս տակ են, իսկ քաղաքական էլիտան դեռեւս գլուխ է ջարդում՝ կ'առաջադրուի, ի վերջոյ, Ռոբերտ Քոչարեանը եւ ինչո՞ւ է լուծւում Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Ռոբերտ Քոչարեանը «բարի գտնուեց» ու մի փոքրիկ կողմնորոշող յայտարարութիւն բախշեց մեզ այն մասին, որ խորհրդարանը վատ, շատ վատ է վարուել վարդան Օսկանեանի նման ազնիւ, բարոյական մարդու ու գործչի հետ: Այստեղից հաստատուեցին, որ Քոչարեանն է կնքահայրը ԲՀԻ-ի, Գագիի Մառուկեանի ու վարդան Օսկանեանի:

Դէ, իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանը խորհրդաւոր էր միշտ: Խօսում է՝ առեղծուածային է, լուծւմ է՝ առաւել եւս:

Անուամենայնիւ, քաղաքական կուլիսային խմորումներն այս երկու անձերի շուրջ են, եւ յետագայ զարգացումները պայմանաւորուած են նրանց քայլերից:

Քաղաքական վերլուծաբաններն իզուր են տրամաբանութիւն

պապ, ես էլ խաղամ» մարաթոնին:

Հայկական քաղաքականութեան ամենամեծ գաւեշտն այն է, որ անգամ Տիգրան Կարապետիչը ստիպուած է ընտրութիւններին մասնակցել դրսի «օքեյը» ստանալուց յետոյ: Եւ հենց այստեղ է, որ արեւմտամէտները, ուսումնասիրելով միմիանց հետ կապուած են մի անտեսանելի շղթայով, եւ արեւմտամէտ Արամ Սարգսեանը ստիպուած է լինում իր առաջադրումը պայմանաւորել, օրինակ, ուսումնասիրելով Տէր-Պետրոսեանի առաջադրմամբ: Վերջինս ինչու է անցել ուսումնասիրելի շարքը, երբ 5 տարի շարունակ, կարծես, պարուծ էր Արեւմտաքի հնչիւնների տակ, պատասխանեց ուսումնական բազմապիսի պաշտօնատեղի իջած փաթեթը, որին կողմ քուէարկեցին իր իսկ ձեռամբ կազմուած ՀԱԿ-ի ցուցակի կարկառունները:

Այսպիսով, հայոց քաղաքագիտութեան բեղուն արգանդից պոկուած անալիտիկներին խորհուրդ է տրուում գերծ մնալ նախագահական արշաւի ֆաւորիտների առաջադրման շուրջ վերլուծութիւններ անելու գայթակղութիւնից: Դա կարող

Ռոբերտ Քոչարեանը «բարի գտնուեց» ու մի փոքրիկ կողմնորոշող յայտարարութիւն բախշեց մեզ այն մասին, որ խորհրդարանը վատ, շատ վատ է վարուել վարդան Օսկանեանի նման ազնիւ, բարոյական մարդու ու գործչի հետ

# ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԳԼԽՈՒՄ Է

## ԱՐԱՄ ԱՐԱՂԱՄԵԱՆ

Մեծ Բրիտանիայի եւ Շոտլանդիայի վարչապետներ Դեյվիդ Քեմերոնը եւ Ալեքս Սալմոնդը պայմանագիր են ստորագրել, որով 2014 թուականի աշնանը Շոտլանդիայում հանրաքուէ է անցկացուելու: Այդ հանրաքուէի միջոցով որոշուելու է՝ արդեօք Շոտլանդիան մնալու է Բրիտանիայի կազմում, թէ՞ ոչ: Ստորագրման արարողութեան ժամանակ Քեմերոնն ասաց, որ յարգում է շոտլանդացիների կամքը, քանի որ նրանք ընտրել են հենց այն կուսակցութիւնը, որը պայքարում էր այդ հանրաքուէի համար, չնայած կարծում է, որ երկու ժողովուրդների համար աւելի ձեռնտու կը լինի, եթէ նրանք մնան նոյն պետութեան կազմում: Սալմոնդն էլ վստահեցրեց, որ հաւատում է հանրաքուէի արդիւնքում իր երկիրը կ'անկախանայ: Բայց երկուսն էլ յայտարարեցին, որ յարգելու են հանրաքուէի ցանկացած արդիւնք: Ինչո՞ւ են այդ երկու երկրների ղեկավարներն այդքան հանգիստ վերաբերուում այդ ինդերին: Որովհետեւ անգամ Շոտլանդիայի անկախանալու դէպքում այդ երկրները կը մնան միասնական եւրոպական ընտանիքի անդամ, նրանք կ'ունենան թափանցիկ սահմաններ, երկու ժողովուրդների ներկայացուցիչներն էլ հարեւան երկրում ինդեր չեն ունենայ, եւ այդ բոլոր պայմաններն առկայութեան դէպքում անկարի կամ ոչ անկարի վիճակը այնքան էլ էական չէ: Մանաւանդ, որ հիմա էլ Շոտլանդիան իր ներքին քաղաքական եւ

տնտեսական խնդիրները լուծելիս միանգամայն ինքնուրոյն է:

Մենք՝ Կովկասի ժողովուրդներս, այդպէս առայժմ չենք կարող ապրել: Մեզ՝ հայերիս համար Արցախի անկախութիւնը Ադրբեջանից ամենեւին ոչ խորհրդանշական խնդիր է, որովհետեւ ոչ ոք չի կասկածում, որ Ադրբեջանի նպատակն է ոչնչացնել եւ տարահանել Արցախում ապրող հայերին, եւ այդ նպատակը հարեւան երկրի ղեկավարութիւնն առանձնապէս չի էլ թաքցնում: Ընդհակառակը՝ ընդգծում է եւ ցուցադրում ամբողջ աշխարհին, օրինակ՝ նոյն Ռամիլ Սաֆարովի պատմութեամբ: Նոյնատիպ վտանգը կախուած է նաեւ Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի պիտին, եթէ դրանք վերագառնան վրաստանի կազմ: Հետեւաբար՝ դա ոչ թէ մէկ ժողովուրդի, այլ առնուազն »տարածաշրջանային» մտածելակերպ է: Որտե՞ղ են դրա ակունքները: Ինձ թւում է, դա մի կաղապար է, ըստ որի՝ աւելի հեշտ է բռնի ուժով, սպառնալիքով, շանտաժով տիրել, իշխել, «ենթարկեցնել» ժողովուրդին կամ մարդուն, քան համագործակցել նրա հետ: Ի դէպ, այդ կաղապարից Բրիտանիան հրաժարուել է աւելի քան կէս դար առաջ, իսկ Ռուսաստանն ու Միացեալ Նահանգները դեռ չեն հրաժարուել: Բայց ամբողջ ինդերն այն է, որ այդ նոյն մտածողութիւնն առկայ է ոչ միայն «տարածաշրջանային», այլեւ ազգային եւ աւելի ցածր մակարդակներով, ընդհուպ մինչեւ ընտանեկանը: Եւ մեզանից շատերն իրենց տներում այնպիսի «կայսրութիւն»

փնտրում վերջիններիս առաջադրուել-չառաջադրուելու հարցում, քանի որ ամէն ինչ կախուած է Փութինի աշխատանքային գրաֆիկից: Նրանց անորոշութիւնը մատնում է, որ այս օրերին Ռուսիոյ կայսեր աշխատանքային գրաֆիկը խիստ ծանրաբեռնուած է, եւ նա ժամանակ չունի առանձին նազիր-վեզիրներին ուղարկել մեր նախագահացուների մօտ:

Արեւմտեան թեւը շատ աւելի կայտառ է հանրային շփումներում, մամուլի հրապարակումներում: Արամ Զ. Սարգսեանին, ըստ նրա, մեծ խանդավառութեամբ է ընդունել Սպիտակ տունն ու Պետդեպարտամենտը: Իհարկէ, նա չի մանրամասնում, թէ քանիբարդ էջելոնի մօտ է նա գերագանց գնահատականներով յանձնել իր քննութիւնը: Բայց «յա վիդել Լենինա» ենթատեքստով հարցազրոյցները վկայում են, որ Արամ Սարգսեանը շատ մօտ է նախագահի թեկնածուի բաղձալի կարգավիճակին:

Իհարկէ, միւս արեւմտամէտները՝ Րաֆֆի Յովհաննիսեանը եւ «Ազատ դեմոկրատ» Քոբրեյեանը դեռեւս կ'անցնեն հայկական «ուզբորկաների» բովով եւ ապա ապահարգանով կը ներկայանան արեւմտեան իրենց տէրերին, չի բացառուում նրանց բարեհաճութիւնը առանձին-առանձին ստանան՝ մասնակցելու «Լաւ էլի,

են ստեղծել, որ դրան կը նախանձին Ալեքսանդր Մակեդոնացին, Նապոլեոնը կամ Ստալինը:

Երբ մենք փոխադարձաբար կը ձանաչենք միմեանց անձնական ազատութիւնն ու անկախութիւնը, այդ փոքր աղիւսներից կամացկամաց կը կառուցուի եւրոպական արժէքների վրայ հիմնուած ժողովուրդների ընտանիք:

«ԱՌԱՒՕՏ»

են աւելի ճշգրիտ անել նրանք, ովքեր ժամանակ ունեն հերթապահելու Փարաքարում եւ ուշիուով հետեւելու Երևան-Մոսկուա եւ Մոսկուա-Ուաշինկթոն չուերթերին:

«ՀԱՅԵԼԻ»

## ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱԿԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳԱԻԹԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$225.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY



ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՅՍ ՊԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է ԳՏՆԻՈՒՄ ՇՈՒՐՁ 5000 ՍՈՒՐԻԱՐԱՅ

Եթէ կարող էք բերել մի սփիւռքահայի, ով կասի, թէ Սփիւռքի նախարարութիւնը չի ընդունալ որեւէ հարցում, եթէ օդանավայանից չեն դիմաւորել, ես անյապաղ կը հեռացնեմ աշխատանքից թերացած աշխատակցին: Այս մասին Հոկտեմբերի 15-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց Սփիւռքի նախարար Հրանտյ Յակոբեանը:

Այս պահին Հայաստանում է գտնուում շուրջ 5000 սիրիահայ, աւելի քան 1700 ընտանիք, որոնց խնդիրների լուծման համար կատարուել են մի շարք փոփոխութիւններ ՀՀ օրէնքներում եւ որոշումներում: Նա տեղեկացրեց, որ Հայաստանի բուհեր դիմել է 200 ուսանող, դպրոցներ եւ մանկապարտէզներ յաճախում է աւելի քան 500 երեխայ, այդ թւում՝ նորաբաց ծրագրով սիրիական դպրոց ընդունուել է շուրջ 250 աշակերտ: Աշխատանքի կարիք ունեն 3000 հոգի, հիմնականում ապրում են վարձով: Նախարարի խօսքով՝ սիրիահայերը, եթէ երկքաղաքացի են, ունեն նոյն իրաւունքներ եւ պարտականութիւնները, ինչ եւ ՀՀ միւս քաղաքացիները: Այդ շրջանակում նա ընդգծեց, որ 18 տարեկան լրացած արական սեռի բոլոր ՀՀ քաղաքացի սիրիահայերը՝ ըստ Սահմանադրութեան յօդուած 47-ի, պարտաւոր են ծառայութիւն անցնել հայոց բանակում: Նրանց համար նախատեսուած են պարտադիր ժամկէտային ծառայութիւնից ազատուելու եւ տարեկան նոյն իրաւունքները, ինչ եւ ՀՀ միւս քաղաքացիների համար: Հրանտյ Յակոբեանը տեղեկացրեց, որ 2012թ Յունուարից հոկտեմբերի 9-ը ընկած ժամանակահատուածում ՀՀ սփիւռքի նախարարութիւնն այցելել է շուրջ 490



Սփիւռքի նախարար Հրանտյ Յակոբեան

սիրիահայ, ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայութեան միջոցով հանրակացարաններում տեղաւորուել է 32 ընտանիք՝ 71 անդամով, յատկացուել է 28 սենեակ: Սփիւռքի նախարարութիւնը դիմած սիրիահայերի մեծ մասը՝ շուրջ 350 ընտանիք բնակուել է վարձով, մօտ 50՝ բարեկամի տանը, մի մասն ունի սեփական բնակարաններ, միւսները՝ տեղաւորուել հանրակացարաններում: 2012 թուականի սկզբից մինչեւ Հոկտեմբերի 15-ը Սիրիայում գոհուել է 36 հայ, որոնցից 28 տղամարդ, 7 կին եւ 1 երեխայ, նրանցից 24-ը գոհուել է Հայկազում: Հրանտյ Յակոբեանը նշեց, որ այդ երկրում ներքաղաքական առձակատման առաջին օրերին կոչ են համայնքին զերծ մնալ եւ պահպանել քաղաքական չէզոքութիւնը: Իսկ այն վայրերում, որտեղ ռազմական գործողութիւններ չկան, փորձել են համալրել ուժերը, իսկ որտեղ պատերազմ է՝ աջակցել դեղորայքով եւ սնունդով:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԱՏ ՄԱՍՈՒԼԸ ԶԻ ԿԱՅԱՆՈՒՄ», - ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հայաստանում առկայ է լրատուական «քիլլերութիւն» եւ որպէս այդպիսին՝ ազատ մամուլի շատ դժուար կայացում, ինչը բնորոշ է յետխորհրդային տարածքի երկրներից մեծ մասին: Հայաստանում նշուած Հայ մամուլի օրուայ կապակցութեամբ, մի շարք քաղաքական գործիչների կողմից սեղանին, նման տեսակէտ հնչեցրեց «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը: «Հայաստանում այսօր խօսել անկախ մամուլից, հաւասարագոր է ապրել վիրտուալ կեանքում, որովհետեւ էլեկտրոնային հեռուստամիջոցների հարիւր տոկոսը գտնուում է պետութեան ձեռքում: Կամ, այն մարդկանց ձեռքին, ովքեր կանգնած են կամ մինչեւ վերջերս կանգնած էին իշխանութեան կողքին: Ֆինանսների եւ մամուլի խնդիր է», - ասաց Արամ Կարապետեանը եւ յաւելեց, որ լրատուամիջոցների «սպոնսորները» լրատուամիջոցներն օգտագործում են երկուստեք քաղաքական պայքարի, իսկ աւելի ճիշդ՝ «լրատուական քիլլերութեան» նպատակներով: Մամուլի էջերում օբիեկտիւ քննարկում չի կայանում, քանի որ, ըստ Արամ Կարապետեանի, «սպոնսորների» 99 տոկոսը, դրա համար չէ, որ ֆինանսաւորում է մամուլի միջոցները: Այնպէս որ, նրա ամփոփմամբ,

զրաքննութիւնից, քիչ, թէ շատ, ազատ դաշտ է մնացել «Ֆէյսբուքը»: «Միաւորուած աշխատանքային կուսակցութեան» անդամ, նախկին պատգամաւոր Վիգէն Խաչատրեանը մասամբ համամիտ է, մասամբ՝ ոչ, եւ խորհրդային անցեալի հետ բանախօսներից մէկի համեմատութիւնը, (որ չնայած խօսքի ազատութեանը, երբեմն չափից դուրս ազատ տրուած գնահատականներում, դրանից ոչ մի բան չի փոխուում՝ ի տարբերութիւն խորհրդային ժամանակների, երբ լրագրողի մէկ յօդուած կարող էր կաղերային փոփոխութիւններ առաջացնել պետական համակարգում) նրա կարծիքով՝ տեղին չէ: «Երբ ասում էք» հերիք էր մի յօդուած հրատարակուէր, նախարար գործից կը թռնէր, դա բնաւ չի խօսում այն մասին, որ ազատ մամուլ կար: Ոչ մի լրագրող դա չէր կարող անել ինքնուրույն: Այսօր սինքն» սկզբից որոշում էր, որ պէտք է պաշտօնեան հեռացուէր աշխատանքից, յետոյ գրուել էր յօդուածը ու ոչ երանի, եթէ վերադառնանք դրան», - ասաց Վիգէն Խաչատրեանը: Նրա ամփոփմամբ՝ բնական է, որ եթէ երկրում որոշ մեխանիզմներ գործում են աղաւաղուած, ապա մամուլն էլ, որպէս այդ երկրի հայելի, պէտք է արտացոլի նոյնը:

ՔՈՔՈՒԵԼԵԱՆԻ ՀԱՐՑԸ Կ'ՈՐՈՇԵՆ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՈՒՄ»

«Մեկնաբանելու կարիք չկայ, որովհետեւ, կարծում եմ, ամէն ինչ պարզ է. Քոքոբէլեանը Քոքոբէլեանի Յովհաննիսեանի յայտարարութեան հետ կապուած նոյնիսկ հերքում էլ չէր արել: Ընդամէնը գնահատական տուեց, որ դա յուզական յայտարարութիւն է, բայց չսասց, որ այն, ինչ ասում է պարոն Յովհաննիսեանը, ճիշդ չէ, իրականութեանը չի համապատասխանում», - «Առաւօտ»-ի հետ գրոցում անդրադառնալով «Ազատ Դեմոկրատներ» կուսակցութեան նախագահ Խաչատուր Քոքոբէլեանի արած հակընդէմ յայտարարութեանը, ասաց «Ժառանգութեան» վարչութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը: «Ժառանգութեան» առաջնորդ Քոքոբէլեանին ստախօս էր անուանել, քանի որ վերջինս դժբէլ էր մանդատը վայր դնելու՝ նախնական պայմանաւորուածութիւնը: Իսկ «Ժառանգութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը, կայքերից մէկին տուած հարցազրոյցում հաստատել էր, որ նման պայմանաւորուածութիւն եղել է եւ ինքն էլ ներկայ է եղել այդ պայմանաւորուածութեանը: Մեր հարցին՝ ի՞նչ քայլեր են մտադիր ձեռնարկել «Ժառանգութիւնում», Արմէն Մարտիրոսեանն ասաց, որ «Ազատ Դեմոկրատներ» հետ հետագայ համագործակցութեան հետ կապուած որեւէ որո-



Նախկին պատգամաւոր Արմէն Մարտիրոսեան

շում առայժմ չունեն: Ի թիւս այլ հարցերի, այս հարցը եւս հնարաւոր է քննարկուի ամսի 21-ին կայանալիք կուսակցութեան վարչութեան նիստում: «Ինքս, կողմ կը լինեմ համագործակցութեան շարունակմանը», - ասաց պարոն Մարտիրոսեանը: Հարցին՝ այս ամբողջ պատմութիւնից յետոյ պատկերացնո՞ւմ էք համագործակցութիւն՝ հակադարձեց. «Պատկերացնելը շատ դժուար է, որովհետեւ, այս դէպքում արդէն «Ազատ Դեմոկրատները» հնարաւոր է խնդիր ունենան իրենց առաջնորդի հետ կապուած: Ես խօսում եմ կուսակցութեան հետ համագործակցութեան մասին, քանի որ պարոն Յովհաննիսեանի յայտարարութեան մէջ էլ ոչ թէ կուսակցութիւնն է շեշտուած, այլ բացառապէս Խաչատուր Քոքոբէլեանը»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՏԱԴԻՐ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ «ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ

Մոսկուայի կողմից Հայաստանում իրականացուող վիճակագրոյց «Հայրենակիցներ» միգրացիոն ծրագրի շուրջ հակասութիւններ են առաջացել Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարութիւնների միջեւ: Այդ մասին յայտնի դարձաւ Երեւանում տեղի ունեցած Հայ-ռուսական տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի հերթական նիստից յետոյ: Նիստից յետոյ, որը համանախագահուել էին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը եւ Ռուսաստանի տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը, Հայաստանում Ռուսաստանի դեսպան Վլադիսլաւ Կովալենկոն, «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան, տեղեկացրեց, որ «Հայրենակիցներ» ծրագրի հարցը այսօր քննարկուել է յանձնաժողովի աշխատանքի ժամանակ, բայց կողմերը մնացել են իրենց դիրքորոշումներում: Կովալենկոն, սակայն, մանրամասներ չհաղորդեց: Փոխարէնը փակագծերը բացեց Ռուսաստանում Հայաստանի դեսպան Օլեգ Եսայեանը, ով նոյնպէս մասնակցել է յանձնաժողովի աշխատանքներին: Եսայեանը ասաց, որ առաջացած հակասութիւններն անգամ արձանագրուել են նիստի աւարտից յետոյ կազմուած փաստաթղթում: «Կողմերը մնացել են իրենց դիրքորոշման մէջ. դա նշանակում է, որ ռուսական կողմը արձանագրութիւնում գրեւէ է, որ Ռուսաստանը չհամարձակուել է ծրագրի իրականացման հարցում: Հայկական կողմը ընդգծելով, որ ինքը կատեգորիկ դէմ է այդ ծրագրի իրականացմանը», - ասաց Եսայեանը:

նացմանը», - ասաց Եսայեանը: Օրերս Ռուսաստանը պաշտօնապէս յայտարարեց, թէ ընդլայնում ու դիւրացնում է «Հայրենակիցներ» ծրագրի իրականացումը եւ խնդիր է դրել տարեկան ապահովել 300 հազար միգրանտների հոսք դէպի Ռուսաստան, առաջին հերթին՝ մերձաւոր արտերկրից մարդկանց Ռուսաստանում մշտապէս բնակեցնելու հաշուին: Իսկ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը, մօտ տաս օր առաջ ելույթ ունենալով Ազգային ժողովում, յայտարարեց, թէ Ռուսաստանի միգրացիոն ծառայութեան կողմից իրականացուող այդ ծրագիրը Հայաստանի համար ընդունելի չէ: «Այն ձեւով ու ֆորմատով, որ այդ ծրագիրն իրականացուում է այլ հանրապետութիւններում, մեզ համար ընդունելի չէ: Եւ մենք համաձայնութիւն չենք տուել մեր Ռուսաստանի գործընկերներին, որ այս ծառայութիւնը իր գործունէութիւնը ծաւալի Հայաստանի Հանրապետութիւնում», - ասել էր վարչապետը: «Ազատութիւն» ռադիոկայանին հարցին, թէ ծրագիրը կը շարունակի՞ գործել Հայաստանում, Հայաստանի փոխարտգործնախարար Շաւարշ Քոչարեանը, ով նոյնպէս ներկայ էր հայ-ռուսական միջկառավարական յանձնաժողովի նիստին, պատասխանեց. - «Ներողութիւն, Հայաստանի տարածքում գործողութիւնները որոշում է Հայաստանը, այնպէս որ, քանի որ շատ յստակ արտայայտուել է Հայաստանի դիրքորոշումը, ապա բնական է, որ չի կարող այդ ծրագիրը իրականացուել»:



ԼՈՒՐԵՐ

JANE'S INTELLIGENCE. «ԼՂ-Ի ՇՈՒՐՁ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՍԵՆԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՍՑԵՆԱՐԸ ՍՏԱՏՈՒՄ-ՔՈՅԻ ՊԱՅՊԱՆՈՒՄՆ Է»

«Վերջին շրջանում հայադրբեջանական շփման գծում միջադեպերի առաւել յաճախակիացումն ու դրանց բազմազանութիւնն ի վերջոյ կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ այս առանձին բախումները դուրս գան վերահսկողութիւնից՝ յանգեցնելով լայնածաւալ հակամարտութեան»,- գրում են բրիտանական Jane's Intelligence հանդէսի փորձագէտները՝ բաւական մանրամասնօրէն անդրադառնալով Երեւանի եւ Բաքուի միջեւ այս պահին նկատուող ուժերի դասակարգութեանն ու Լեռնային Ղարաբաղի շուրջ նոր պատերազմի վերսկսման հաւանականութեանը:

Jane's-ի մասնագէտները լրջօրէն քննարկում են Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձութիւնների զարգացման երեք սցենար. - «Ամենալաւատեսական եւ միաժամանակ ամենաքիչ հաւանական սցենարի դէպքում իրադարձութիւնները զարգացումը ի վերջոյ կը յանգեցնի խաղաղ համաձայնագրի ստորագրմանը: Դա տեղի կ'ունենայ այն դէպքում, եթէ 2013-ին Ադրբեջանում եւ Հայաստանում կայանալիք նախագահական ընտրութիւնները լուրջ փոփոխութիւնների պատճառ դառնան»: Jane's-ը նշում է, որ այս սցենարի իրագործումը նախեւառաջ հնարաւոր կը դառնայ, եթէ Ադրբեջանում իշխանութեան գալ ժողովրդավարական կառավարութիւն, որն ի վիճակի կը լինի հանրութեանը նախապատրաստել խաղաղութեան, եւ Լեռնային Ղարաբաղի հետ ուղիղ բանակցութիւնների կը գնայ:

«Հայաստանում իրավիճակը փոքր-ինչ այլ է», - շարունակում են բրիտանացի մասնագէտները՝ նկատելով. - «Բաքուի դիրքորոշման մեղմացմանը զուգահեռ Սերժ Սարգսեանը, 2013-ին վերընտրուելու դէպքում, պէտք է արդէն սեփական հանրութեանը պատրաստի գիշումների, մասնաւորաբար՝ Լեռնային Ղարաբաղը շրջապատող բուֆերային գոտու յանձնարումը»: «Սերժ Սարգսեանը ցոյց տուեց, որ չի խուսափում ոչ մեծ ժողովրդականութիւն վայելող արտաքին քաղաքական քայլերից, երբ մի քանի տարի առաջ Թուրքիայի հետ յարաբերութիւնները բարելաւող երկու արձանագրութիւն ստորագրեց», - գրում է Jane's Intelligence հանդէսը՝ նկատելով, որ եկող տարուայ նախագահական ընտրութիւններում Սերժ Սարգսեանի վերընտրութիւնը «խոչընդոտ չի հանդիսանալ այս լաւատեսական սցենարի իրագործման համար»:

Այլ խնդիր է, ըստ բրիտանացի վերլուծաբանների, որ անգամ իշխամ Ալիեւի իշխանագրկման դէպքում այս սցենարը կեանքի կոչուելու շատ քիչ շանսեր ունի:

«Ադրբեջանական ընդդիմութիւնը, եթէ նոյնիսկ ինչ-որ կերպ կարողանայ յաղթել, եւս հաճոյքով կը սկսի օգտագործել ազգայնական խաղաքարտը», - նշում են վերլուծաբանները:

Երկրորդ սցենարը, ըստ Jane's

Intelligence-ի մասնագէտների, առաւել հաւանական է. - «Այս դէպքում առկայ ստատուս-քոն պահպանում է, քանի որ աշխարհաքաղաքական դերակատարներից եւ ոչ մէկը՝ ո՛չ Միացեալ Նահանգները, ո՛չ Ռուսաստանը եւ ո՛չ էլ Եւրամիութիւնը շահագրգռուած չեն պատերազմի վերսկսմամբ: Ռուսաստանի աջակցութեամբ Հայաստանը կը շարունակի գսպել Ադրբեջանի նկրտումները: Բացի այդ, Բաքուի կողմից ձեռնարկուող ռազմական վերագինման ծրագիրը դեռ չի հասցուել աւարտին»:

Բրիտանացի վերլուծաբանների պնդմամբ, գոյութիւն ունի եւս մէկ գուտ հոգեբանական գործօն, որ կարող է ստիպել Ադրբեջանին կարճաժամկէտ հեռանկարում գերծ մնալ պատերազմի վերսկսմանը. - «1992-94 թուականներին այսօրուայ նման Հայաստանը շրջափակման մէջ էր: Բացի այդ, հանրապետութեան հիւսիսում գտնուող արդիւնաբերական բոլոր կենտրոնները 88-ի երկրաշարժի արդիւնքում աւերակների էին վերածուել: Սրան գումարած՝ հայկական բանակը թոյլ էր ու վատ կազմակերպուած, ինչը, սակայն, չխանգարեց հայերին յաղթել պատերազմում: Բացի այդ, Ադրբեջանում հասկանում են, որ, ի տարբերութիւն իրենց երկրի բնակիչների, Լեռնային Ղարաբաղի հայերի համար առաջիկայ պատերազմը գոյութեան կուի է լինելու»:

Ինչ վերաբերում է ամենայրուեստական սցենարին, որի իրականութիւն դառնալու հաւանականութիւնը բրիտանացիները գնահատում են որպէս միջին՝ Jane's-ում կարդում ենք. - «Լայնածաւալ պատերազմը կարող է սկիզբ առնել տարբեր դրդապատճառներից ելնելով՝ եթէ ադրբեջանական զինուած ուժերի ստորաբաժանումները համեմատաբար մեծ յարձակում իրականացնեն Լեռնային Ղարաբաղում, եթէ ադրբեջանական կողմը հարուածի Ղարաբաղում նոր գործարկուող օդանաւակայան թռչող հայկական քաղաքացիական օդանաւին, կամ եթէ Հայաստանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը: Պատերազմի վերսկսման պատճառներից մէկը կարող է լինել նաեւ Ռամիլ Սաֆարովի հնարաւոր սպանութիւնը»:

Բրիտանացի վերլուծաբանները նկատում են, որ եթէ առաջիկայ հինգ տարիներին Ադրբեջանը շարունակի նոյն քանակութեամբ ֆինանսներ ծախսել բանակի վրայ, ապա նրա յաջողութեան հնարաւորութիւնները աւելի իրատեսական կը դառնան. - «Դրա հետ մեկտեղ ադրբեջանական կողմը հիմնական շեշտը դնում է գէնք գինամթերքի ձեռքբերման, բայց ոչ անձնակազմը մարզելու եւ զինուած ուժերի կառավարման համակարգի զարգացման վրայ: Բացի այդ, աշխարհագրութիւնը եւս հայերի օգտին է, յատկապէս՝ եթէ հաշուի առնենք, որ Լեռնային Ղարաբաղի արեւելեան սահմանը պաշտպանուած է Մուալի լեռնաշղթայով»:

ԽԱՂԱՐԿՈՒԵԼ ԵՆ «ՀՐԹԻՈՒՅԻՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ»

Հոկտեմբերի առաջին կէսին Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում իրականացուած աննախադէպ խոշոր զորավարժութիւնների ժամանակ հայկական զինուած ուժերի կողմից խաղարկուել են հրթիռային հարուածների տարբերակներ, որոնց հեռահարութիւնը կարող է կազմել աւելի քան 300 կիլոմետր:



Scud-B հրթիռային համալիրները ռազմական շֆերթի ընթացքին. Երեւան, 21 Սեպտեմբեր, 2011-ին

ՀՀ Զինուած ուժերի գլխաւոր շտաբի օպերատիւ վարչութեան պետ, գեներալ-մայոր Արտակ Դաւթեանը լրագրողների հետ հանդիպմանը նախ փոխանցեց, որ, հրթիռային հարուածներ են մոդելաւորուել պայմանական հակառակորդի ռազմական եւ տնտեսական օբեկտների նկատմամբ: Պաշտպանութեան նախարարութիւնում «Ազատութիւն» ռադիոկայանի աղբիւրները փոխանցում են, զորավարժութիւնների ժամանակ մոդելաւորուել են հրթիռային բազմաթիւ հարուածներ, եւ այդ հարուածների քանակով ու հեռահարութեամբ նշուած զորավարժութիւնները աննախադէպ են եղել Հայաստանի զինուած ուժերի համար: Յիշեցնենք, աւելի քան երկու տարի առաջ՝ 2010-ի Օգոստոսին Հայաստանի պաշտպանութեան նա-

խարար Սէյրան Օհանեանը, խօսելով Զինուած ուժերի սպառազինութեան արդիականացման մասին, յայտարարեց, թէ առաջիկայում շեշտը դրուելու է հեռահար եւ գերճշգրիտ զինատեսակների ձեռքբերման, ինչպէս նաեւ տեղում դրանց արտադրութեան վրայ: Յատկանշական է, որ անցած տարուայ Սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Անկախութեան տօնին նուիրուած զորահանդէսում ցուցադրուեցին հարուածային նշանակութեան մի շարք հրթիռներ, այդ թւում՝ ռուսական արտադրութեան 9Պ72 «Էլբրուս» օպերատիւ-մարտավարական հրթիռային համալիրները, որոնք աշխարհին յայտնի են ՆԱՏՕ-ական դասակարգման անուանումով՝ Scud-B, եւ որոնց հեռահարութիւնը մօտ 300 կիլոմետր է:

ԻՆՉՈ՞Ւ Է ՈՒՇԱՆՈՒՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕԴԱՆԱԿԱԿԱՅԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Ստեփանակերտի օդանաւակայանը շուտով շահագործման կը յանձնուի: Յայտնի է, որ այն նախատեսուած է մէկ ժամում 100 ուղեւոր սպասարկելու համար: Ուղեւորափոխադրումները իրականացնելու է «Air Artsakh» ավիընկերութիւնը: Նշենք, որ Ստեփանակերտի օդանաւակայանը կառուցուել է 1974թ.-ին, սակայն դադարել է գործել 1992թ.-ից, երբ սկսուեցին լայնամաշտաբ ռազմական գործողութիւնները: Վերանորոգումը սկսուեց 4 տարի առաջ: ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանը դեռ 2011թ.-ի Նոյեմբերի 9-ին յայտարարեց, որ այն կը գործարկուի մօտ ժամանակներս, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով գործընթացը յետաձգուեց: Վերջերս օդանաւակայանի գլխաւոր ճարտարապետ Տիգրան Բարսեղեանը յայտարարեց, որ ոչ մի խնդիր չկայ եւ այն կարող է գործել: Զուգահեռաբար օդանաւակայանի շահագործման մասին իւրաքանչիւր յայտարարութիւնից յետոյ Բաքում բարձրացնում է հիստերիա: Բաքուն

յայտարարեց, որ Երեւանը ԼՂ-ում օդանաւակայանը գործարկելու իրաւունք չունի եւ կը հրթիռակոծի ԼՂՀ տարածքով թռչող ցանկացած օդանաւ: Նրանք համոզուած են, որ օդանաւակայանը հայերը կ'օգտագործեն ռազմական նպատակներով: «Այսպիսի պահուածքը չի ցուցաբերում Հայաստանի պատրաստակամութիւնը բանակցութիւնները շարունակելու մասով», - յայտարարել է Ադրբեջանի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Եւման Աբդուլաեւը: Իր մասին լիչեցրեց նաեւ Թուրքիան: Որոշ լրատուամիջոցներ յայտարարեցին, թէ Թուրքիան կը փակի Հայաստանի համար իր օդային տարածքը: Այդ ընթացքում յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ ԱնՉէյ Կասպրովիչը: Նա ասաց, որ օդանաւակայանի բացումն առանց երկկողմանի համաձայնութեան կը վնասի խաղաղ բանակցութիւնների ընթացքին: ԵԱՀԿ ներկայացուցիչը յայտնեց նաեւ, որ այն չի համապատասխանում միջազգային իրաւունքի նորմերին:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ

Շարունակուած էջ 1-էն  
նելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եզրակացութիւններն ու առաջարկները», - յայտարարեց Սերժ Սարգսեան: Եւրոպայի ամենամեծ քաղաքական ընտանիքի առջեւ իրելոյթի ընթացքին Սերժ Սարգսեան յայտարարեց նաեւ, որ Հայաստանի իշխանութիւնները շօշափելի ֆինանսական աջակցութեան

կարիք ունին երկրէն ներս սկսած բարեփոխումները աւարտին հասցնելու հարցով եւ այս նպատակաւ օգնութիւն կ'ակնկալեն եւրոպական կառույցներէն: Յառաջիկայ ընտրութիւններէն ու ներքին բարեփոխումներէն բացի Սարգսեան անդրադարձաւ նաեւ դարաբաղեան հարցին ու ատրպէյճանցի մարդասպան Սաֆարովին ներում չնորհելու հարցին:

ՄԱՍԻՍ  
ԱՍԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



### ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԻ ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Անցած են 92 տարիներ, սակայն նոր Հաճընը շատ փոխուած չէ: Բնականաբար, ամբողջութեամբ փոխուած է աւանի աշխարհագրական վայրը՝ ան պատմական Կիլիկիայէն հասած է Պէյրուս: Սակայն միեւնոյնը մնացած է հաճընցիի գոյատեւման եւ պայքարի ոգին: Աւանդոյթը եւ ժառանգութիւնը վառ պահելու, ինչպէս նաեւ նահատակներու յիշատակը յարգելու նպատակով, Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը կազմակերպեց մատակարար պատրաստութեան ամէնամեայ միջոցառումը, Շաբաթ, 13 Հոկտեմբեր 2012-ի երեկոյեան՝ Պէյրուսի Նոր Հաճըն աւանին մէջ:

Առաւօտեան ժամերէն սկսեալ, հաճընցի եւ թաղեցի աշխույժ կիւներու նախաձեռնութեամբ մեկնարկեց մատակարար պատրաստութեան աշխատանքը: Հետզհետէ թաղամաս սկսան ժամանել հայրենակիցներ, լիբանանահայեր եւ սուրիահայեր, որոնց ներկայութիւնը յատկանշական էր այս տարուայ միջոցառումին:

Բոլորը պատրաստ էին ընդունելու ՀՄՄ-ի փողերախումբը, որ թաղամաս մուտք գործեց «Օդանաւ Եկաւ» քայլերգով: Պաշտօնական հանդիսութեան ներկայ գտնուեցան ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ, պետական երեսփոխան Սեպուհ Գալփաքեան, ՍԴՀԿ Լիբանանի Շրջանի վարիչ Մարմնի ատենապետ Ալեքսան Բէճօզէրեան եւ վարչութեան անդամներ, պետական հաճընցի երեսփոխան Սերժ Թուրանարզիսեան, Սուրբ Գէորգ եւ Սուրբ Յարութիւն եկեղեցիներու հոգեւոր հովիւներ՝ Տէր Նարեկ քահանայ շեմսեան եւ Տէր Ղեւոնդ քահանայ Լոշխաճեան, հայկական միութիւններու ատենապետներ եւ ներկայացուցիչներ, Սուրբ Գէորգ եկեղեցու թաղականութեան անդամներ, հաճընցի հայրենակիցներ, լիբանանահայեր եւ հիւրեր:

Բացման խօսքով հանդէս եկաւ Լուի Եագուպեան, որ հերոսամարտի աւանդական միջոցառումը կարեւոր օղակ համարեց՝ հայ ինքնու-

թեան պահպանման եւ հայ յեղափոխականոցի փոխանցման սերունդէ սերունդ: «Արծուբերդն Հաճընը պատմութեան ընթացքին պարարտ հող հանդիսացաւ հայ ազատագրական պայքարի շարժումներուն եւ հաճընցիք անձնագործութեամբ սերմանեցին ազատագրական պայքարի ոգին ու գաղափարը եւ միացան 125-ամեայ Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան մայր կուսակցութեան նահատակներու հոյլին», ըսաւ Եագուպեան:

Գեղարուեստական յայտագրով ներկայացուեցան ասմունքներ, երգեր ու պարեր:

Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան խօսքը փոխանցեց Նայիրի Շորճեան: Ան նշեց, որ միութիւնը, իր կազմութեան թուականէն մինչեւ այսօր, սփիւռքի տարածքին եւ մասնաւորաբար Լիբանանի մէջ կը միտի իրար մօտ հաւաքել հաճընցիները ու վառ պահել ազգային պայքարի ոգին՝ յանուն հայրենասիրութեան եւ հայապահպանութեան: Դիտել տալով, որ միութիւնը տարուան ընթացքին սատար կը հանդիսանայ հաճընցի հայրենակիցին, նիւթապէս եւ բարոյապէս թեւ ու թիկունք կանգնելով անոր, Շորճեան հաստատեց, որ հայրենասիրութեան ջանքը կը փոխանցուի սերունդէ-սերունդ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան ԱՐԵԳ պարախումբը ապա բեմ բարձրացաւ ու ներկայացուց Թամզարա պարը՝ դեկավարութեամբ հայրենի արուեստագէտ Արտաւազդ Աւետիսեանի: Պաշտօնական հանդիսութեանէն ետք, բեմ հրաւիրուեցաւ լիբանանահայ երգիչ Պերճ Նազգաշեանը, որ իր նուազախումբին ընկերակցութեամբ ներկայացուց ազգային, հայրենասիրական եւ յեղափոխական երգեր, ոգեշնչելով թաղամասին մէջ հաւաքուած երիտասարդները: Նոյն միջոցին, ներկաներէն շատեր հերթափոխաբար ստանձնեցին աւանդական մատակարար պատրաստութիւնը, խառնելով հաճընցիներու «ճիտապօր»ը:

### ՀԱՆ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻՆ

Շաբաթուազուած էջ 1-էն

բերը դուրս բերաւ Իրաքէն՝ վերջ դնելով հարիւր հազարաւորներու կեանքը խլած պատերազմին: Աֆղանիստանի մէջ եւս Ամերիկեան զօրքերը սկսած են դուրս գալ: Իրանի պարագային, կարողացաւ դէմ դնել Հանրապետական շրջանակներու ռազմատեւէ կոչերուն ու եւրոպական երկիրներուն հետ համագործակցաբար կը փորձէ տնտեսական պատժամիջոցներով լուծել Իրանի հիւլէական ծրագիրներուն շուրջ ստեղծուած տագնապը:

Միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին գծով Օպամա արձանագրեց մեծ յաջողութիւններ: «Ալ-Քաիտա»-ի բազմաթիւ դեկավարները ոչնչացնելով, գլխաւորութեամբ Ուսամա Պին Լատընի, մեծապէս տկարացուց այդ կազմակերպութիւնը: Ողջունեց Արաբական աշխարհէն ներս ծայր առած համաժողովրդային շարժումները ու նպատեց անոնց յաղթանակին:

Գալով Հայութեան, Օպամայի վարչակարգը ջատագովեց Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զարգացումը եւ ազատութիւններ-

ընդ պաշտպանութիւնը: Ղարաբաղեան հարցի գծով քննադատեց Ատրպէյճանի ռազմաշունչ յայտարարութիւնները ու շարունակեց պաշտպանել հարցը խաղաղ միջոցներով լուծելու անհրաժեշտութիւնը:

Ամերիկահայութեան համար գլխաւոր մտահոգութիւն կը մնայ անշուշտ Յեղասպանութեան ճանաչման հարցը: Նախագահ Օպամա թէեւ չկարողացաւ յարգել իր խոստումը, սակայն Ապրիլ 24-ի իր յայտարարութիւններուն մէջ, տարբերութիւն իր նախորդներէն, առաջին անգամ ըլլալով գործածեց «Մեծ Եղեռն» եզրը: Աւելին, ան թուրքիոյ խորհրդարանի առջեւ ելոյթ ունենալով, կոչ ըրաւ թուրքիային հաշտուելու իր պատմութեան հետ՝ ակնարկելով Հայկական Յեղասպանութեան:

Անցնող չորս տարիները ցոյց տուին, որ նախագահ Օպամա իմաստուն ու հեռատես դեկավար մըն է եւ ի վիճակի է Ամերիկայի Միացեալ Նահանգները դուրս բերելու անոր դիմագրաւած դժուարութիւններէն: Նկատի առնելով այս բոլորը ու նաեւ այն, որ Միթ Թամսի ամբողջութեամբ անտե-

### ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑ ՀՐԱԶԴԱՆԻ ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՍ



Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում (բնակչութեան թիւը 40746) տեղի ունեցան քաղաքապետարանի ընտրութիւնները:

ՍԴՀԿ Հայաստանի շրջանը մասնակցեց ընտրութիւններին եւ աջակցեց ընկեր Գարիկ Գրիգորեանին՝ աւագանու ընտրութիւններին: Նա ընտրուեց 15 աւագանիների կազմում՝ ստացած ձայների քանակով լինելով 3-րդը:

Ընտրութիւնից յետոյ Գարիկը այցելեց ՍԴՀԿ վարչութիւն: Հանդիպմանը ներկայ էին ՍԴՀԿ ԿՎ անդամ Վազգեն Գալթաճեանը, ՍԴՀԿ վարչութեան ատենապետ Գէորգ Պերկուպեղիեանը, վարչութեան անդամ Վ. Ազատեանը, Վ. Եղիազարեանը, քաղաքական հարցերով խորհրդական Դ. Մարտիրոսեանը, ՏՏԵՄ անդամներ եւ Սուրիայի հյուսիսային շրջանի վարիչ մարմնի ընկերներ:

### ՀԱՆԳԻՍՏ՝ Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Շաբաթուազուած էջ 1-էն

նաեւ եղել է ճեմարանի փոխտեսուչ: 1946 թ. Յուլիսին մեկնել է ԱՄՆ եւ նշանակուել Հիւսիսային Ֆլորիդայի (Փենսիլվանիա) Ս. Երրորդութիւն հայկական եկեղեցու հոգեւոր հովիւ: 1951 թ. Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդի կողմից նշանակուել է թեմի առաջնորդական փոխանորդ:

1954 թ. Հիւսիսային Ֆլորիդայի մէջ տարով վերսկսելով ծառայութիւնը՝ Հայր Թորգոմը վերադարձել է Երուսաղէմ եւ նշանակուել ճեմարանի տեսուչ: Նա նաեւ վարել է Պատրիարքարանի դիւանապետի պարտականութիւնները:

1960 թ. վերադառնալով ԱՄՆ՝ ուսումը շարունակելու նպատակով ընդունուել է Քեմպրիճի Եպիսկոպոսական Աստուածաբանական Դպրոց (Մասաչուսեթս):

1962 թ. ընտրուել է Հայ Եկեղեցու Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ:

Նոյն թուականին Հոկտեմբերի 14-ին, ձեռնադրուելով շառաւիղի Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրուել է Եպիսկոպոս:

1966 թ. Ապրիլին, Արեւմտեան թեմի առաջնորդի պաշտօնում 4 տարի ծառայելուց յետոյ Թորգոմ Եպիսկոպոսը ընտրուել է Հայ Եկեղեցու Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ:

Երկու տարի անց, երջանկաշիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի կողմից նրան շնորհուել է Արքեպիսկոպոսի պատիւ:

Արեւելեան թեմի առաջնորդի պաշտօնում 24 տարի ծառայելուց յետոյ, Թորգոմ Արքեպիսկոպոսը 1990 թ. Մարտի 22-ին ընտրուել է

Երուսաղէմի 96-րդ Պատրիարք:

1994 թ. Օգոստոսի 19-ին վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանումից յետոյ Ամենապատիւ Սրբազան Հայրը նշանակուել է Կաթողիկոսական Տեղապահ:

Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը ստացել է մի շարք ակադեմիական պարգևներ, արժանացել է Նիւ Եորքի Ընդհանուր Աստուածաբանական Ճեմարանի պատուաւոր դոկտորի կոչման:

1986 թ. ստացել է նաեւ Ամերիկայի երկու գլխաւոր պարգևները. «Ազատութեան Արձան» եւ «Էլիզ Այլընտ» պատուոյ շքանշանները:

Թորգոմ Պատրիարքը մեծ աւանդ է ունեցել միջազգային էկոմենիկ յարաբերութիւնների զարգացման գործում: Նա ծառայել է ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Ժողովի յանձնաժողովում, նախագահել է «Կրօնն ամերիկեան կ'եանքում» խորհուրդը: Եղել է նաեւ «Խղճմտանքի կոչ» հիմնադրամի տնօրէնների խորհրդի անդամ:

Թորգոմ Պատրիարքը հեղինակ է 20 մենագրութիւնների, որոնց թւում է բանաստեղծական երեք ժողովածուներ, հայկական Ս. Պատարազի ուսումնասիրութիւն, հայոց Մեծ Եղեռնին նուիրուած գրքեր եւ Երուսաղէմի սուրբ վայրերի մանրամասն ուղեցոյց: Պատրիարք Հայրը ճանաչուած կոմիտասագէտ էր:

Հոկտեմբերի 14-ին՝ Ս. Պատարազի աւարտին, Մայր Տաճարում կը կատարուի հոգեհանգստեան արարողութիւն՝ Հայ Եկեղեցու վաստակեալ սպասաւորի հոգու խաղաղութեան համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

սած է Հայ ընտրողները, մեր նախընտրութիւնը կ'երթայ Պարաք Օպամային:

Հետեւաբար, Նոյեմբեր 6-ին ամերիկահայութիւնը կոչուած է մասնակցելու ընտրութիւններուն

ու իր ձայնը տալու Նախագահ Պարաք Օպամային:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Լոս Անճելըս  
Հոկտեմբեր 17, 2012



# ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՒՈՅԻՆ ԱՒՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

## ԱԻՆՏԻՍՌԱՋՄԻԿ

Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան անվիճարկելիորէն նուաճած է հայ գրականութեան բարձրագոյն գագաթը: Սակայն ան բանաստեղծ ըլլալու կողքին ունեցած է հասարակական բեղուն գործունէութիւն՝ միաժամանակ ըլլալով եօթ հայրենակցական եւ գրական միութիւններու նախագահ. եղած է խմբագիր, նշանառու որսորդ, գորավար եւ բանակցող. լուսանկարչութիւնը եղած է իր ամենասիրելի գրադրուածքը:

1921-ին Հայաստանի վերաշինութեան նպատակով Երևանի մէջ կեանքի կը կոչուի Հայ Օգնութեան Կոմիտէն (ՀՕԿ), որուն առաքելութիւնը համայն հայութեան նիւթաբարոյական ուժերուն մէկտեղումն էր հայրենիքի կառուցման գաղափարականին շուրջ: Որպէս հայ կեանքի ամենասիրուած անձնաւորութիւն եւ բոլոր կողմերէն ընդունելի հեղինակութիւն ՀՕԿ-ի առաջին նախագահը կը նշանակուի Յովհաննէս Թումանեան: Այս պարտականութեան ծիրէն ներս, 1921-ի Դեկտեմբերին ան կ'ուղղուի Պոլիս: Հոնկէ ան նամակ մը կը յղէ իր սրտակից բարեկամներէն գրող Աւետիք Իսահակեանին (իր արտայայտութեամբ՝ Աւոլին): Բարեհամբոյր եւ հանդարտաբարոյ մեծ մտաւորականը անդրադառնալով Հայաստանի 1920-21 թուականներու կացութեան, կը գրէ. «Ես չեմ ուզում եւ չեմ կարող երկար ու բարակ գրել մեր երկրից, թէեւ դու հարցնում ես: Կարճ ասեմ. մենք թէ՛ դրսից, թէ՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք եմ ասում, եւ սրա մէջն է ճշմարտութիւնը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը ապիկար թշուառականներ, եւ չերեւաց մի բազմութիւն, գոնէ մի խմբակ, որ վերածնուող երկրի շունչն ու բարոյական կարողութիւնը յայնաբերէր: Էսքան աղէտների ու պարտութիւնների մէջ ո՛չ մի մեղաւոր չերեւաց, ո՛չ ոք պատասխանի կանչուեց, ոչ պատասխան տուեց: Եւ շարունակուում է այժմ էլ նոյն մարդիկը նոյն ճանապարհներով...»

Եւ ոչ մէկը գոնէ անձնասպան չեղաւ, որ ապացուցանէր, թէ գոնէ ամօթ ու խղճմտանք կայ է մարդկանց մէջ, կամ էս ժողովրդի մէջ: Բայց ես ի՞նչ եմ ասում. չկարողացան գոնէ վշտանալ կամ վշտացած երեւալ»:

Գրականագէտ, թումանեանագէտ, սկզբնաժողովուրդի Հեռոն Հախվերդեան կը վկայէ. «Սրանք ամենացատկունալից տողերն են, որ ես կարդացել եմ Թումանեանից: Այս տողերում տրոփում է պարտուած հայրենիքի կորստեան ցաւը: Պարտուած հայրենիքի զաւակի հոգին ծառս է եղել ամէնքի եւ ամէն ինչի դէմ, ապաշնորհ եւ ապիկար ազգային գործիչների դէմ յատկապէս»:

Ես ալ իմ հերթիս, սոյն նամակը կը գրեմ անդենականի բնակիչ անգուզական բանաստեղծին. Շատ սիրելի Յովհաննէս Թումանեան, նախ կը համբուրեմ վէս ճակատդ եւ սուրբ ձեռքերդ: Ինչ որ նամակիդ մէջ գրած էիր 1921-ին, նոյնն է այսօր Հայաստանի վիճակը. թերեւս ալ աւելի վատ: Վստահ եմ լսած ես, որ 1991-ին Հայաստան անկախացաւ եւ իրականացաւ մեր դարերու երազը. բայց ափսոս, ահա քսանմէկ տարիէ ի վեր Հայաստանի իշխանութեան կը տիրեն աւազակներ, թալանչիներ եւ քրէական յանցագործներ: Երէկուան խաչագողներ պետական լծակներու շնորհիւ կեղեքեցին ժողովուրդը, թալանեցին երկիրը, ազգին պատկանող հարստութիւնները իւրացնելով՝ գումարները փոխադրեցին արտասահման: Վերջերս Հայաստանի երկրորդ նախագահը Յունաստանի մէջ կղզի գնեց, անշուշտ ոչ թէ ազգին համար, այլ իր անձնական հաճոյքին. անշուշտ՝ ժողովուրդէն կողոպտած գումարներով: Երանի՜ տեսնես Հայաստանի Ազգային ժողովի անդամները, մեծ մասը օլիգարխներ, մեծ գումարներու տէր մարդիկ՝ գուրկ ազգային ու մարդկային բարոյական նուազագոյն սկզբունքներէ. ազգը բարոյական անկում կ'ապրի՝ ի տես նման մարդոց, որոնք շրջապատած են Հայաստանի վերնախաւը: Ազգային ժառանգութեան պահպաններ, միտքի եւ գիտութեան գործիչներ, սրտցաւ եւ բարեխիղճ մարդիկ կը հալածուին, մինչ՝ հաստափոր եւ հաստավիզ պատգամաւորներ ազգին ճակատագիրը կը տնօրինեն: Գազիկ անունով ամենահարուստ մարդը կը փառաբանուի որպէս բարեգործ, բայց ոչ ոք հարց կու տայ. այդքան հարուստութիւն ուրկէ՞ դիզած ես ախպեր, մեր հայրենիքը ինչքա՞ն թալանած ես ո՞վ «բարերար»...: Հայաստանի մէջ նուազագոյնը չորս հեռուստակայաններու սեփականատէր ըլլալու համար պէտք է ըլլաս Հայաստանի նախագահին (Սերժ

Սարգսեան) փեսան (Միքայէլ Միլնասեան): Բնապահպանութեան նախարարը ինքզինք թոյլ կու տայ թալանել Հայաստանի հանքերը եւ վաճառել առանց հաշիւի ու հաշուետուութեան. մեր հանրապետական պոպուլսթով պատգամաւոր Վարդան Այվազեանը հրեշտակի թեւերով կը հետապնդուի ամերիկեան իշխանութիւններուն կողմէ:

Սիրելի Թումանեան, երբեմն կ'ըսեմ թէ լաւ որ դուն չես տեսներ այս բոլորը, այլապէս՝ պիտի խելագարուէիր, փխրուն սիրտդ ճաքէր պիտի: Այս անիշխանութեան եւ թալանչիապետութեան ի տես՝ ժողովուրդը կը լքէ երկիրը եւ կը ցրուի ամէնուր. 1991-էն ի վեր աւելի քան մէկ միլիոն հայ բռնեց գաղթականութեան ցուպը՝ արտասահմանի մէջ աշխատելով ամենայետին եւ ստորնացուցիչ գործեր եւ աւելի ուշ ձուլուելու պայմանով. անոնց շարքին՝ ծոռը (Իրմային որդին) Ռուբէն Քանթանեանը հասաւ Գերմանիա: Այո, Հայաստան կը դատարկուի հայերէ: Բայց մի՛ մտահոգուիր, կը շատնան եղբայր եգոփները. վերջերս սրբավայր մըն ալ ունեցան Արմաւիր մարզին մէջ. մեր յոյսը եգոփներն են... նաեւ՝ պարսիկ փեսաները որոնք կու գան Հայաստան ապօրինի ընտանիքներ կազմելու. ուրեմն՝ կը շատնանք հայ-պարսիկ ապօրինի սերունդով:

Սիրելի Թումանեան, դեռ շատ-շատ բաներ կան պատմելիք, մէկը միւսէն սրտածմլիկ եւ զարհուրելի փաստերով: Լսեցի՞ր 1999 Հոկտեմբեր 27-ի մասին. Վազգէն Սարգսեանը պատմած կ'ըլլայ: Իսկ մօտա է ծեծով հայ սպաննելու հայկական աւանդութիւն. Ռ. Քոչարեանի թիկնապահները ծեծով Պողոս Պողոսեանը սպաննեցին 2002-ին, ոչ ոք պատժուեցաւ: Վերջերս Նեմեց Ռուբոյին (Հայաստանի ամենալիստուած օլիգարխներէն) թիկնապահները նոյնպէս ծեծի տակ սպաննեցին բժիշկ սպայ Վահէ Աւետեանը: Իրարու լաւ սպաննել սորվեցանք. դուն դարձեալ պիտի գրէիր. ողբի հայրենիք, որբի հայրենիք...:

Սիրելի բանաստեղծ. իմացած կ'ըլլաս մեր բանակի յաղթանակին եւ մարտունակութեան մասին. հոս քիչ մը լաւ լուրեր կան հաղորդելիք. բայց ոչ, մի՛ շտապեր: Ամէն Հինգշաբթի Հայաստանի կառավարութիւնը կը կատարէ իր հերթական նիստը եւ նոյն օրը կառավարութեան շէնքին առջեւ հարիւրաւոր մայրեր բողոք-ցոյց կը կատարեն՝ պա-

հանջելով իրենց զինուոր-զաւակներուն սպանութեան մութ ծալքերուն բացայայտումը: Անոնք թուրք կամ ազերի զնդակներով սպաննուած չեն, այլ՝ հայկական բանակի մէջ հայ զինուորներու եւ հրամանատարներու զնդակներով սպաննուած հէզ գորակոչիկներ եւ յետոյ յայտարարուած՝ «դժբախտ պատահար», «անձնասպանութիւն», «անյայտ պատճառներ» եւ այլ կեղծ ու սուտ խօսքեր: Շուրջ 310 զինուորներ ինկան այսպիսի անհեթեթ պատճառներով վերջին 10 տարիներուն: Մեղք մեր բանակի վարկին ու նուիրական առաքելութեան:

Սիրելի մեծ հայ, արդեօք քու բարեկամ միւս անուանակիցիս՝ Աւետիս Ահարոնեանին կը տեսնե՞ս. ինք գրած է. «այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարգայ նախատինք». դժբախտաբար, պէտք է կարդան նախատինք. որովհետեւ՝ վերջերս Սթամպուլի մէջ անձնասպան եղաւ Նարինէ Մկրտչեանը. ան թուրք Օրհանին հետ կենակցելով ամուսնութիւն ակնկալած է, սակայն՝ թուրքը կը պարտադրէ որ հայուհին ծառայութիւն մատուցէ իր եղբօրը՝ Օսմանին. այս ճնշումին տակ Նարինէն ինքզինք թունաւորեց: Անցեալ տարի Չարենցաւանէն Աննա Դաւթեանին դիակը գտնուեցաւ Անգարայի մօտ վայր մը. խեղճը նոյնիսկ յղի էր. տեսնուած էր թուրքերու հետ Անթալիայի եւ Անգարայի հիւրանոցներուն մէջ: Իսկ իջեւանէն Գոհար Կիրակոսեանը կը հետապնդուի Հայաստանի եւ թուրքերոյ կողմէ՝ Տրապիզոնի մէջ հայուհիներ սուլթանի եւ էնվերի յետնորդներուն հայթայթելու յանցանքով: Հայ վշտի երգիչ Աւետիս Ահարոնեանին ըսէ, որ փոխուած են հայուհի բարոյական չափանիշները:


Իսկ եթէ միւս բարեկամիդ՝ Դերենիկ Դեմիրճեանին տեսնես, ըսէ, որ իր պրոնգէ արձանը գողցան ոչ թէ Անգարայի կամ Իզմիրի մէջ, այլ՝ Երեւանի Կոմիտասի անուան պանթէոնէն: Մշակոյթի բարբարոս հայեր երեւի պրոնգի պէտք ունէին, յարմար գտան իր արձանը. թող չնեղուի, կողոպտած են նաեւ Հ. Աճառեանի, Յ. Այվազովսկիի եւ Դաւիթ Անյաղթի արձանէն կտորներ: Այս ալ մշակութասէր հայ ժողովուրդի արեւելահայ զաւակները...:

Յամենայն դէպս բաւարարուիմ այսքանով. երեւի չզիմանայ քու մաքուր սիրտդ եւ վճիռ հոգիդ:

Համբոյրներով՝ ասդենակահանէն անդենական:


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs


Մենք հայերս մշակոյթով հներից մէկն ենք, չենք ասում ամենից բարձր ենք, բայց ոչ ոքից էլ ցածր չենք եւ ոչ մէկին էլ չենք թերագնահատում, «Միայն թէ պարզապէս մեզ հայ են ասում» անմահ Պ. Սեւակի խօսքով: միայն թէ մեր ժողովրդի ճակատագիրը այլ ձեւով է տնօրինուել, տառապանքներով ու կոտորածներով, որոնց պատճառով այսօր այսպէս մասնատուած հայրենիք ունենք եւ աշխարհում ցիր ու ցան: Այն օրից որ նորամուտ կրօնը պետականօրէն ընդունուեց, սկսուեցին մեր ազգային ճախողութիւնները՝ պարտութիւն, ջարդ ու կոտորած, հայրենի հողերի կորուստ եւ նահանջ, կրօնի գաղափարախօսութեան սխալ մեկնաբանութեան պատճառով:

Մեր անցեալի կեանքում շատ ենք տուժել եւ դեռ տուժում ենք, քանի որ անմիաբան ենք եղել, իրար նկատմամբ գոռոզ եւ անգիշող, իսկ օտարին հլու հպատակ օտարամոլ: Հայրենիք պահելը քաջութիւն, հաւատարմութիւն, նուիրուածութիւն եւ հայրենասիրութիւն է պահանջում, որ ցաւօք սրտի այս խօսքերը ինչ կազդեն ապագային մարդու վրայ: Հիմա էլ դեռ չենք իմանում, ոնց պիտի ապրենք եւ ոնց պիտի պաշտպանենք մեր երկիրն ու մեր ժողովուրդը: Հայրենիքը լքում ենք, աղանդաւորների շարքերն ենք մտնում՝ նրանց որոգայթում շեղուած մեր եկեղեցուց եւ ազգային հասկացողութիւնից ու այսպէս սխալներ շարունակ...

Արի ու տես այդ աղանդաւորական կազմակերպութիւններին, թէ ինչպէս նրանց ազատ գործունէութիւն է թոյլատրուել, նրանք իբր թէ քրիստոնէութիւն են քարոզում, այն էլ ում՝ քրիստոնեայ երկրին: Մի տեսակէտից սովետական կարգերը բարիք եղան մեր ժողովրդի համար, կրօնի Ֆանտազեան մոռացնել տուեց հայրենիքում եւ դա պատճառ դարձաւ Արցախի պատերազմում մերոնք անվեհեր ճակատեն թշնամու դէմ՝ բռնուցքի դէմ բռնուցքի քաղաքականութիւնը բանեցնեն, բռնութեան դէմ՝ բռնութիւն, ուժի դէմ՝ ուժ եւ տեսանք թէ ինչպէս մի բռն ժողովուրդ թրքական հակաճաւալ գէնքի ու բանակների դէմ դիմադրեց եւ յաղթութիւն տարաւ,

Այո՛, հայ ենք, մեզ հպարտ ենք

զգում, թէ եւ երկրով փոքր եւ քանակով քիչ, սակայն մշակոյթով բարձր ենք հանց լեռը մեր Արարատ: Ամենակարեւոր արժանիքը մեր ժառանգականութիւնն (գեն, ծին) է, որն յատուկ է մեր ժողովրդին իր բացառիկութեամբ, ուշիմութեամբ, աշխատասիրութեամբ եւ ընդունակութիւններով, որը պէտք է անարատ պահել ամուսնութիւններով:

Մեր արժէքները պաշտպանելու համար անհրաժեշտ է իւրաքանչիւր հայ իմանայ ինքն որտեղից է եկել, ուր են գտնուում իր ակունքները, ինչ պիտի անի որ պահպանուեն դրանք որպէս ազգի գոյութեան խարիսխներ:

Մենք վաղուց պիտի չքանայինք պատմութեան թատերաբեմից, եթէ մեր մշակոյթի հրապուրանքը չլինէր, մեր հոյակապ ու ճկուն, հարուստ ու քաղցրահնչիւն լեզուն չլինէր, մեր գեղազարդ տառերը՝ իւրաքանչիւրը մի նկարչական պատառ, մեր մշակոյթի հոգեկան եւ բարոյական արժանիքները՝ կոթողները, մագաղաթեայ մատենները ընտանեկան սովորութիւնները չլինէին: Դժուար կարելի է գտնել օտարների մօտ հարազատական ամուսնութիւնը մինչեւ եօթը պորտ արգելուած լինի: Այս բոլոր հոգեբարոյական արժանիքների համար մենք մեծապէս երախտապարտ ենք եւ աւանդաւոր վարդապետին՝ մեր Մեսրոպ Մաշտոցին, որ լուսազագաթ գիւտով յաւերժ լուսաւոր ճամբայ բացեց մեր ժողովրդի եւ հայրենիքի համար, հիմք դրեց մեր ինքնուրոյն դպրութեան: Վարդապետին որպէս աջակից, խորհրդատու եւ թիկունք դարձան՝ Սահակ կաթողիկոսը եւ Վառամշապուհ արքան, երեք անմահանուն այրեր լուսաշող ծառայութեամբ: Անուրանալի է մեր Թարգմանիչ Վարդապետների փաղանգի ստեղծած վիթխարի կրօնական, փիլիսոփայական եւ պատմական գրականութիւնը, նրանք իրենց ուսուցիչներին՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի հետ միասնաբար ստեղծեցին հայոց դպրութեան «Ոսկեդարը», Աստուածաշունչի «Թագուհի» թարգմանութիւնը:


Ասում ենք՝ մեր մշակոյթի գանձարանը հարուստ է, կասկած չկայ դրա մէջ, ոսկեայ օղակներով հիւսք: Եկէք միասնաբար պահենք ու պաշտպանենք այս հիւսքը նոր օղակներ գոգելով եւ մեր աշխատանքով ու գործով մեր մշակոյթի հուրը թէ՛ պահենք մեր գաւակների հոգում եւ սրտում:

Շնորհաւոր Մշակոյթի Տօնը: Փառք ու պատիւ մեր դպրութեան արարիչներին ու արարողներին, երախտագիտութիւն մեր մշակոյթի գանձանակը ճոխացնող արուեստից ստեղծագործողներին, մասնուրի մշակներին, աշխատակիցներին, Մեսրոպեան ջահը վառ պահող մեր ուսուցիչներին եւ բոլոր նրանց, որոնք իրենց հայապահպանման ծառայութիւնն են բերում առ ի գոյատեւումն սերունդների եւ հայկեան մշակոյթի:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

# ՅՈՒՇԱՐԶԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Սրտաբույժ Գուրգուր Գիրքեւ օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

**(626) 797-7680** կամ **(818) 429-2322** քիւերուն

Լարակազմ. մաքուր տպագրութեամբ. 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ. որպէս երախտագիտութեան անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատմութիւնը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:



# ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍԵԱՆ

## ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Հայրենիքը հրաշքներով լի մի վայր,  
Հաւատա ու սիրիք նրան որ-  
պէս մայր,  
Եւ պահիր հոգով խորհում մեր  
անշք սէրն հար:

Բանասիրական գիտութիւնների դոկտոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բազմաթիւ շքանշանների արժանացած՝ Արտեմ Սարգսեանի՝ «Մեր լեզուն և մեր խօսքը» և «Դար» հաղորդաշարերը մեծ բաւականութիւն ու յուզում են պատճառում, գիտելիքներով հարստացնում գիտողներին և ամրապնդում նրանց հոգում հայրենասիրական զգացմունքներն ու սերը հայրենիքի հանդէպ:

Սոյն թուի (2012) Օգոստոսի 28-ին, Երեքշաբթի օրը մեծ շուքով նշուեց բազմավաստակ ազգային գործչի, ազնիւ ու արժանաւոր հայի ծննդեան 70-ամեակը Հայաստանյայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդարանի Գալաջեան սրահում (3325 N. Glonoaks Blvd, Burbank, Ca 91504), իրեն յարգող մտաւորականների, արուեստագետների ու ժողովրդի հոծ մասնակցութեամբ: Այդ առթիւ նա բազմաթիւ շնորհաւորանքներ էր ստացել Հայաստանից և տարբեր երկրներից...:

Շնորհաւորում ենք յոբելիարին այդ առիթով, ցանկանում երկար կեանք և բեղմնաւոր ազգային գործունէութիւն ի բարօրութիւն մեր հայրենիքի ու ազգի:

Արտեմ Սարգսեանի հետ են անձամբ ծանոթացայ 2011 թ. աշնանը Լոս Անճելոսում: Նրա պարզ, մարդկային վերաբերմունքի շնորհիւ մենք բաւական մօտից ճանաչեցինք իրար: Նկատի ունենալով հենց այդ հանգամանքը, համարձակուեցի փորձել գրել իր 12 օրում գրած «Փրկութեան բանալին» գրքի մասին, որն ընթերցողին մատուցում է պարզ ու մատչելի լեզուով: Գիրքը յազնուած է փիլիսոփայութեամբ ու հումորով, որը կարդացում է մէկ շնչով:

Գիրքը 436 էջ է, բաղկացած է երկու մասից՝ «Մաս առաջին-Փորձուքի»-27 գլուխ «Մաս երկրորդ-Փրկութեան ելքի որոնման նախապարհին»-14 գլուխ «Փրկութեան բանալին» աշխարհի կործանումից մարդկութեան փրկութեան մասին է: Գրքի գլխաւոր հերոս Հանս Վերֆելն իր մէջ մարմնաւորում է հեղինակին:

Հանս Վերֆելը, որպէս ազնիւ ու օրինակելի վարք ունեցող, Աստուծուն հաւատացող անձնաւորութիւն, Նոյ Նահապետի կողմից արժանանում է վստահութեան եւ նրա միջոցով դառնում է հսկայական հարստութեան տէր՝ պայմանով, որ մարդկութիւնը փրկի երկրի կործանումից, որն ըստ մայաների օրացույցի նշուած է Դեկտեմբեր 21, 2012 թ. (12.21.12): Նոյ Նահապետը Հանս Վերֆելին այցելում է երազում և ասում է. «Հաշուի առնելով քո մահուր պարած կեանքը, Ս. Գրքի պատուիրակներին ոչ թէ վախից, այլ սիրով մտաբերեմ հետեւելու համար...» (էջ 19), «Վաղը դու դառնալու ես մեծահարուստ անձնաւորութիւն, եթէ յիշես այս թուերը, որ հիմա կ'ասես մեզ, և գնես վիճակախաղի

գոնէ մէկ տոմս» (էջ 10):  
Ժամանակին, որպէս ազնուաբարոյ անձնաւորութիւն, Նոյ Նահապետն է ընտրուել Աստուծոյ կողմից, և փրկել մարդկանց Ջրհեղեղի ժամանակ, իսկ հիմա Աստուծոյ անձնակատար Նոյ Նահապետը դիմում է Հանս Վերֆելին՝ մարդկութիւնը փրկելու աշխարհի կործանումից, որի մասին անընդհատ խօսուում ու քննարկուում է ամենուրէք:

Հանս Վերֆելը 25 տարի է աշխատում է Վիեննայի արուեստների պատմութեան թանգարանում: Կիրն՝ Լարիսան քաղաքի փոստորոշիչ կենտրոններից մէկի լաբորատորիայի շարքային բժիշկ է, տղան՝ Յոհանը Վիեննայի համալսարանի ճարտարագիտական բաժնի աւարտական կուրսի ուսանող է, իսկ աղջիկը՝ Լինդան քոլէճի նախալերջին դասարանցի:

Գրքում յաճախ է արտացոլում իրականութիւնը հումորով. Լարիսան լսելով Հանսի վարքի մասին, հարցնում է, թէ նա երբեք է՞ր դաւաճանել իրեն: Հանսը պատմում է նրան հետեւեալը. երբ մի յայտնի նկարիչ քաղաքի հիւրանոցներից մէկում «դաւաճանում» է կնոջը, ինչ որ մէկը լուրը հասցնում է կնոջը, որը գալիս է հիւրանոց ու դուռը ծեծում. «Բացիր դուռը, սրիկա, դու դաւաճանում ես ինձ...», ամուսինը ներսից. «Կնիկ, դու ho հայրենիքն ես, որիս չի կարելի դաւաճանել...» (էջ 19): Վիեննայի փողոցներում զբօսնելիս Լարիսան Հանսին ասում է. «Ձգոյժ, չընկնես շան կեղտի մէջ», Հանսը. «Երանի միայն շները աղտոտում լինէին մեր միջավայրը» (էջ 349): Ահա, թէ հեղինակը ինչպիսի հումորով է ներկայացնում Հայրենիքի հանդէպ սէրը, հայրենիքն այսօր դարձել է մի բուռ մարդկանց խաղաղք՝ իրենց զրպանները ուճացնելու համար, որի արդիւնքում դատարկում է այն...: Միւս կողմից մարդկութիւնը այն աստիճանի է կեղտոտուել՝ շեղուելով իր բարոյական սկզբունքներից, որ հնարաւոր է մաքրել այն, որի համար էլ աշխարհին կործանում է սպասում:

Նոյ Նահապետի յանձնարարականը Հանսին. «Բեզ է վերապահուած փնտոնելու և գտնելու փրկութեան ելք: Եթէ իմ պարագային ջրհեղեղներից ազատուելու համար կենդանի արարածներին փրկելու ելք յատկապէս իր, քո պարագային աւելի բարդ է լինելու: Պետք է որոնես, պետք է փնտոնես աշխարհի տարբեր ծայրերում առկա, ակնյայտ կամ թաքուն ելքերը, միջոցներ... Այնպէս՝ որ այդ գումարը շահելուց յետոյ ծախսիր հենց այդ նպատակով» (էջ 41):

Հանսը յիշելով Նոյի ասած թուերը՝ 3, 13, 22, 34, 45 եւ 46, Լարիսայի միջոցով գնում է վիճակախաղի մի տոմս և շահում 387 միլիոն եւրօ կամ կէս միլիարդ տոլար:

Փրկութեան բանալին փնտոնելիս Հանսի գլխաւոր ուղեցույցը դառնում է Ս. Գիրքը՝ իր բարոյագիտական սկզբունքով եւ Հին ու Նոր կտակարաններով: Աշխարհի կործանումը մօտենում է, որովհետեւ մարդ արարածը շեղուելով Աստուծոյ թելադրած մարդկային սկզբունքներից, դարձել է վաչրազ, գող, աւազակ, խաբէբայ, պողտիկ եւ ընդունելով այլ ամենավատ ածականներն իր նկատմամբ, հեռացել է Աստուծուց ու մարդկութիւնից: Ուստի Աստ-

ուած բարկանալով այդպիսի սկզբունքով մարդկանց գործունէութեանը, ուզում է նրանց պատժել՝ մաքրել երկրի երեսից եւ ապահովել բարի ու ազնիւ վարքագծով, աստուածավախ և Աստուծոյ նկատմամբ հաւատ ունեցող մարդկանց գոյութիւնը՝ արդարօրէն դատելով իր իսկ ստեղծած արարածներին, որպէսզի նրանք աշխատեն չշեղուել ճանապարհից:

Հենց Հանսը մեծահարուստ է դառնում, դրամաշորթները վիստում են նրա շուքը, ինչպէս՝ Աբիսողոմ աղայի, մի տարբերութեամբ, որ Աբիսողոմ աղային խաբէլով էին դրամ շորթում, իսկ Հանսից պահանջելով՝ որպէս ազգական, դրացի, ծանօթ, կազմակերպութիւն եւ այլն:

Արդեօք մարդ երջանիկ է իր ունեցած այդպիսի ահռելի հարստութեամբ, մի գուցէ: Բայց երբ այդ հարստութիւնը բերում է չնախատեսուած անակնկալներով բազմաթիւ մտահոգութիւններ, մի գուցէ ոչ: Երբ մարդ ապրում է «տապալուծելով իր իւրով», ընդհանրապէս գոհ է, որովհետեւ նրա մտահոգութիւնները գլխաւորապէս պարփակուած են իր ընտանիքի բարեկեցութիւնը ապահովելու խնդրով: Եթէ որոշ չափով հարստանում է ու ճիշտ է օգտագործում հարստութիւնը, երջանիկ կեանք է վայելում: Իսկ եթէ ահռելի գումարի տէր է դառնում, ինչպէս Հանս Վերֆելը, այն էլ յանձնարարականով՝ աշխարհի բոլոր հոգները կուտակուած են գլխին՝ իրենց աննախադէպ եւ անկանխատեսելի մտահոգութիւններով, որի արդիւնքում գիշեր ցերեկ հանգիստ ընդհատելով և երանի է տալիս այն ժամանակներին, երբ չուներ այդ հարստութիւնը եւ գիշերը հանգիստ քնում էր: Այս բոլորից յետոյ, արդեօք արժէ՞ հարստանալ Հանսի նման...: Յիշենք Հանսի հարստութեան հետ կապուած նրա միամիտ աղջկայ՝ Լինդայի կազմակերպած առեւանգման խաղը, որը շատ դէպքերում իրագործուած է:

Հեղինակը՝ Հանսի հարստութեան հետ առնչուած բոլոր առեղծուածները և դրանց լուծումները, աշխարհի կործանումից մարդու փրկութիւնը, կապում է Նոյ Նահապետի եւ Հայկական բարձրավանդակի ունեցած աստուածային ուժի ու կարողութեան հետ, որտեղ ձեւաւորուեց մարդկային քաղաքակրթութիւնը Ջրհեղեղից յետոյ: Նա փիլիսոփայական մօտեցումներով ապացուցում է, որ Հայկական բարձրակարգութեամբ ստեղծուած քաղաքակրթութիւնը տարածուել է աշխարհով մէկ, իսկ այնտեղ շարունակուած է ստեղծուել նորանոր հրաշքներ մարդկութեան բարօրութեան համար, հետեւաբար փրկութեան բանալու փնտոնութիւնը բոլոր ուղիները կարճէք թէ տանում են այնտեղ: Մի հարց էլ սերտ կապուած է դրա հետ: Քանի որ Աստուծոյ հաւատքը՝ քրիստոնէութիւնը առաջինը հայերն են ընդունել և իրենց հաւատքի բազմաթիւ կենտրոններն են ստեղծել Հայկական բարձրակարգութեամբ ու աշխարհի կարեւոր կենտրոններում՝ Երուսաղէմ, Վենետիկ, Վիեննա և այլուր, որոնք ամուր թելերով կապուած են միմիանց հետ, հետեւաբար այդ կենտրոնները մի միասնութիւն են կազմում Արարատի հետ՝ որպէս Նոյի տապանը փրկող Ս. լեռան: Այս բոլորից կարելի է եզրահանգել, որ փրկութեան բանալին մի գուցէ պէտք է փնտոնել այդ վայրերում:

Պատահական չէ, որ Հանսն առաջինը այցելում է Վիեննայի Միլիթարեանների կրթօճախի հա-

րուստ գրադարանը և սկսում է ուսումնասիրել Աստուածաշունչը՝ աշխարհի կործանման կամ ահռելի աղէտների մասին, որոնց լուրջ էր վերաբերում հարստանալուց յետոյ. ինչպէ՞ս վարուել այդ գումարի հետ, երբ յանձնարարութիւն ունի Նոյից՝ մարդկութիւնը փրկելու աշխարհի կործանումից...: Աստուածաշունչում նա կարդում է. «... Եւ բոլոր գոռոզներն ու չարագործները յարդի պէս են լինելու, և նրանց պիտի այրի այն եկող օրը, որը ասում է Ջորաջ Տէրը, որ նրանց համար արմատ եւ ոստ պիտի չթողնի: Բայց ձեզ համար, որ իմ անուցի վախեցում էք, պիտի ծագի արդարութեան արեգակը» (էջ 55):

Հանսը այցելում է Հայաստան՝ «Արմենիա», աւելի շատ տեղեկութիւններ հաւաքելու նրա ու ջրհեղեղի մասին: Նրան են միանում Լարիսան, Լինդան եւ նրա ընկերը՝ էրվինը: Նրանք շատ գոհ են մտում Հայաստանում իրենց ցոյց տրուած բարձր սպասարկումից:

Նա տեղեկ լինելով Թուրքիայի կողմից Հայերի ցեղասպանութեան եւ ազգակցի՝ Ֆրանց Վերֆելի գրած «Մուսա լեռան 40 օրերը» գրքից, Երեւանում գնում է գիրքը և սկսում է կարդալ:

«Փրկութեան բանալին» գրքի հեղինակը Հանսի մտորումներով արտայայտում է իր բողոքը աշխարհին, որ բազմաթիւ լեզուներով թարգմանուած, շարժանկարի վերածուած, միլիոնաւոր մարդկանց կարդալուց եւ դիտելուց յետոյ Ֆրանց Վերֆելի գիրքն ու շարժապատկերը, աշխարհը միայն ցաւակցել է նրան, հարց է տալիս, թէ սա արդարութիւն է՞...:

Հեղինակը երեւանցիների միջոցով իր անհաշիւ ձեռք է ներկայացնում Հանսի ընտանիքին Հայաստանն իր դարաւոր պատմութիւնով՝ էջ մի ամիս, Գառնի, Գեղարդ, Ջուարթնոց՝ գուարթոյ հոգիների վայր, ոգեղեն, հրեշտակային (Ս. Գրքից բերելիական անուանում)՝ հպարտանալով հայ ժողովրդի քաղաքակրթութեան բարձր մակարդակով: Նա ջանում է ցոյց տալ հայի ունեցած ծառայութիւնները և անփոխարինելի ու պատմական անզոհաբար հետեւելու աշխարհին: Վառ օրինակը հարիսայի պատմութիւնն է: Ճշարարում Հանսը նախընտրում է հարիսան, չիմանալով, թէ այն ինչ համ ունի: Մատուցողն ասում է շատ համեղ հայկական ճաշատեսակ է: Հանսը գարմանում է՝ նշելով, որ Յունեսկոն այն ընդունել է որպէս թրքական ճաշատեսակ: Չի ուշանում հեղինակի սուր հումորը մատուցողի բերնով. «Ի՞նչ գիտէք, թուրքերը մեր հողերն էլ նոյն կերպ «ընդունեցին»... իբրեւ իրենցը» (էջ 75):

Հետաքրքիր է Գեղարդի դրուագը: Երբ հիւրանոցի տեղեկատու սեղանում Հանսն հարցնում է Գեղարդի մասին, աշխատակիցը բացատրում է, որ գեղարդը նիզակի երկաթէ այն մասն է, որով խոցել են Տիրոջը՝ Յիսուս Գրիստոսին, իսկ Հանսի այն հարցին, թէ այն պահուած է Գեղարդում, աշխատողը չի իմանում: Ըստ Հանսի, եթէ իրօք այդ գեղարդով խոցել են Քրիստոսին, ապա դրա վրայ պէտք է լինի Տիրոջ արիւնից: Իսկ եթէ դրանից նմուշ կլոն պատրաստուի՞. «Այնքան հրաշալի գաղափար: Տեսնես որքան մէկի մտքով անցնել է դա» (էջ 83): Առաջ անցնելով նշենք, որ լրտեսների կողմից պատրաստուած կեղծ կտրու մի քանի անգամ փոխուելուց յետոյ մինչև յանձնուած է Հանսին, դառ-





"Քաջ Նապար" հանդեսը եւ հեռուստաժամը  
Ներկայացնում է

# 13-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ


**Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,  
ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆԴԱՄ  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ  
(հիմնաձ 1999թ.)**

**Կիրակի, հոկտեմբեր 21, 2012  
երեկոեան ժամ 4-12-ը**

**"KACH NAZAR" Magazine & TV Show  
Presents 13 ANNIVERSARY  
NATIONWIDE TELETHON**

**ON SUNDAY ,  
OCTOBER 21, 2012**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.  
FOR DISABLED CHILDREN AND FOR THE  
RESTORATION OF CHILDREN'S HOMES**



**AMGA CHANNEL 380  
USARMENIA CHANNEL 386  
AABC CHANNEL 384  
VISION TV CHANNEL 381  
From  
5:00pm-11:00pm**

[www.forourkids99.com](http://www.forourkids99.com)



Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.  
Յեր օգնութեամբ մեր ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգեւում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...



P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070  
E-mail: [Forourkids99@gmail.com](mailto:Forourkids99@gmail.com) Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity



**MAKE A CHOICE... MAKE A PLEDGE...**



### 80-ԱՄԵԱՅ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ԵՒ ԻՐ ԱՊՐԱԾ ՈՒ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԸ

#### ԱՐԱՄ ՍԵՓԵՅԻՆ

Վարդգես Պետրոսեան:

Անըմբռնելի միաձուլում մը մարդկային ներանձնական ապրումներու, սէրերու եւ կիրքերու եւ բարոյահոգեբանական խառնուածքի ինքնահակասութիւններով լի արուեստագէտ գրող մը, որ շատ հեշտօրէն իր ներքնախօսութիւնները կը վերածէր գրական էջերու, եւ իբրեւ քննախօսարձակագիր՝ մեր ազգային-հասարակական բարդ իրավիճակներուն հանգուցալուծումները կը կատարէր ամենայն ճարտարութեամբ:

Իր ողջ գրականութիւնը իր կեանքին «ապրած ու չապրած տարիներ»ուն արձանագրութիւնն էր եղած: Խառնուածքով բանաստեղծ էր, -1958-ին հրատարակած էր իր նախախաչըրք՝ «Բալլադ Մարդու Մասին»: Ասպարէզ էր ընտրած լրագրութիւնն ու հրատարակագրութիւնը, ձեռնհասօրէն վարած էր խմբագրի պաշտօնները, բարձրակէտը՝ «Գարուն» ամսագիրն ու «Երկիր Նայիրի» շաբաթաթերթը: Իսկ ի վերուստ շնորհեալ արձակագիրն ու վիպագիրը վերջին երեսնամեակին իրեն ապահոված էր ամուր պատուանդան մը խորհրդահայ գրականութեան:

Արդարեւ, 1960-ական թուականներուն, հայրենական գեղարուեստակապ արձակը կը յատկանշուէր թարմ շունչովը այն շքեղ աստղաբոյլին, որուն երիտասարդ անդամները կերտեցին հայրենի գրականութեան արդիաշունչ երկերը: Վարդգէս Պետրոսեան (իբրեւ «Գարուն» ամսագրի հիմնադիր-խմբագիր) եւ իր սերնդակից ու գաղափարակից սղաքը, ինչպէս Հրանդ Մաթեոսեան, Պերճ Զէյթունցեան, Մուշեղ Գալշոյեան, Զօրայր Խալափեան, Կարէն Սիմոնեան, Գեորգ Արշակեան եւ ուրիշներ, կանգնեցան արժանաւոր դիրքերու վրայ իրենց հրատարակած վէպ-վիպակներով, պատմուածքներով ու խոհափայլիկներով (էսքիզներ պիտի կոչէր զանոնք Վարդգէս Պետրոսեան) որոնք կու գային արտասանելու իրենց նոր խօսքը, հայրենաշունչ եւ արդիական մօտեցումներով: Արդարեւ, խորհրդահայ գեղարուեստական արձակը 1960-ականներուն իրագործեց անկիւնադարձային ոստում մը՝ խորքով ու ձեւով: Խորքին մէջ հարկ է գետեղել համագային ու պետական մակարդակով նշումը հայկական ցեղասպանութեան 50-ամեակին, հայրենի երիտասարդութեան առողջ ընդվզումը եւ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող քաղաքական ղեկավարներու փոխ-ըմբռնողութիւնը: Ապա, արեւելահայերէն լեզուի ուղղափառ կիրարկումը քայլ առ քայլ գնահատելի աճ մը արձանագրեց: Իրօք, փոփոխուող ժամանակները իրենց դրական ազդեցութիւնը կը դրոշմէին գրականութեան ու մշակութի բոլոր մարզերէն, ու յատկապէս խորհրդահայ բանաստեղծութեան բնագաւառէն ներս: Ահաւաստիկ այս ժամանակահատուածին հարագատ ծնունդը եղաւ Վարդգէս Պետրոսեանի «Հայկական էսքիզներ»ու երկհատոր գրական ժառանգութիւնը: Առաջին գիրքը լոյս էր տեսած 1969-ին (Հայաստան Հրատարակչական ընկերութիւն): Հայրենիքին ու Սփիւռքին կենսական մտահոգութիւնները այս փոքրիկ հատորին

մէջ միաձուլուել էին իրարու մէջ: Եղած մէկ հոգեկերտուածք: Քիչ մը բանաստեղծութիւն, - «յոյզ-ապրում-զգացողութիւն» կը գտնենք տարածուած այս գոյգ հատորներու բոլոր էջերուն՝ իբրեւ շունչ ու ոգի, գեղարուեստական պատկեր, ու վաւերաթղթային ճշգրտութեամբ պատում ու պատմութիւն:

Վ. Պետրոսեանի ներաշխարհին ծնունդը էր ու կը մնայ Գ. Նարեկացիին՝ որուն հրեղէն բառերու աւագանին մէջ մկրտուել էր ան իր ամբողջ գոյնութեամբ ու իմացական խորքով: Իրեն համար ընտրել էր նաեւ աւագ եղբայր հոգի մը, նահատակի լուսապակով շողողուն «Պատկեր ու կենդանի»-ը անոր, որ բոլորիս ծանօթ Չարենցն էր: Անով կը շնչէր եւ անով կ'ահագնանար իր ոգեղէն ամբողջը եւ ինք եւս այդ պահուն կ'ուզէր նմանիլ անոր՝ որուն պէս ինք ալ «փոքրամարմին» թէեւ, բայց անկասելի ջրվէժ մըն էր ամբարած իր ներաշխարհին մէջ: Կլանուած՝ անոր «Մահուան տեսիլքով, որուն պղտոր, կատաղած հեղեղը քշում էր իր ժողովրդի պատմութեան դագաղը: Դագաղը... Եւ առաջին տողը ծնունց իբրեւ նորածին մանկան ճիչ» - «Թող ոչ մի գոհ չպահանջուի ինձից բացի, ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...»

Չարենցն էր ան, եւ հայ ժողովուրդն ամբողջ, փառքովն իր հեռուոր անցեալին ու դժինք ճակատագիրովն իր ներկային (1894-1923): Եւ ինք՝ անոր սիրոյն, կենդանի պատարագ ու նահատակ:

Ահաւաստիկ, այս հոգեվիճակը ամէնօրեայ ապրումի վերածող արձակագիրը եղաւ Վարդգէս Պետրոսեան: «Հայկական էսքիզներ»ը գրուեցան հոգեկան այս պայմաններու տակ: Հարց մի տաք իրեն, թէ գրական ո՞ր մէկ սեռին կը պատկանին անոնք: Իւրաքանչիւր պատում՝ իսկական ապրում մըն է ինքն իր մէջ: Մասնիկ մը այն հակաթափառ խճանկարէն զոր Շահնուր իրաւամբ կոչէր էր «Պատերազարդ Պատմութիւն Հայոց»: Եկէք, այս մեծապատառ որմնանկարին սա կէտին վրայ կեդրոնացնենք մեր լուսարձակին շողքը, այնտեղ՝ ուր հայրենի արձակագիրը իր նշանաւոր «Կուր»ը կը մղէր իր ժողովուրդին հետ: Խօսքը կու տանք իրեն.

«Օ, իմ ժողովուրդ, դու հաւաքական Նարեկացի, գուցէ արդար էր, որ դու, հէնց եւ միայն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար եւ հէնց քո «ողբաձայն աղաղակը» չլսէր աշխարհը, թէպէտ դու աղաղակել ես հէնց նրա բառերով: Օ, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ձախողակ: Դու, որ սքանչելի բանաստեղծներ ունեցար, բայց ոչ մի դիւանագէտ եւ պետական մարդ (եթէ ունեցար՝ ուրիշներին ծառայեցին), դու, որ սրբացրիր բոլորին, որ ուզեցան, ճգնեցին քեզ ծառայել, քեզ օգնել՝ առասպելի Արտաւազդ արքայորդուց մինչեւ... Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու... Ես կուի ունեմ ժողովրդիս հետ, իսկ դու ասում ես ինձ հագարամեայ քո հեռուից.

Մի կեղեքի ինձ, յօշոտուած եմ, տես, Արդէն ջարդուածիս էլ մի ջախջախի, էլ մի բզկտի, մորմոխուած եմես,

Մթնածիւս նորից մի կուրացրու...

\*\*\*\*\*

Սիրեցի՞ր դու ունէ մէկից, ունէ մէկը սիրե՞ց բեզ... Իսկ սիրե՞լ եմք մեք ունէ մէկից, ունէ մէկը սիրե՞լ է մեզ...»:

Մէջբերուած այս տողերէն կ'առանձնացնեմ նախ Չարենցին պատկանող նշանաւոր երկտողեակը (... Ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...), ապա՝ Վարդգէսին ուղեղային մորմոքը բացայայտող տողը. «Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու...»: Անհաւատալի է, բայց իրաւ: Ինչպէս պիտի կուահէր թէ, անծանօթ օր մը՝ խաչուելու հերթը պիտի գար նաեւ իրեն, նախ՝ զինք «ողջակիցելով» իր իսկ «կրակէ շապիկ»ին մէջ, ապա՝ 1994-ի Ապրիլ 15-ին, իր հողանիւթ շինուածքը դարձնելով գոհ հայաստան փամփուշտի, գործադրուած խորհրդաւոր պայմաններու տակ, որ պիտի վայելէր «պաշտպանութիւնը» անպատժելիութեան մենաշնորհի մը ծխածածկոյթէն:

Ահա՛ թէ ինչու, իրեն զլացուեցաւ անձամբ ներկայ գտնուել իր 65-70-75 եւ այսօր 80-ամեակի հերթական յոբելաններուն: Որովհետեւ, ոչ եւս է ան, իբրեւ անհատ:

«Ապրած եւ չապրած տարիներ» ասոյթը այլեւս դադարած է իր հանրածանօթ վիպակներէն մէկուն խորագիրը համարուելէ, ու վերադարձած իր հեղինակին: Ողբերգութիւնը սակայն, իր «չապրած տարիներ»ուն մէջ կը գտնուի: Իսկ գիրքերուն ճակատագիրը... նոյնքան դաժան իրականութեան մը դուռը կը բարձր մինչեւ այսօր եւ արդարութիւն կը պահանջէ իր ընթերցողէն:

Իր «ապրած տարիներ»ուն բեղուն հոքը գրական ստեղծագործութեան վերածող գրագէտն էր եղած ան: Իր իսկ բանաձեւումով, գոր կը գտնենք «Հայկական էսքիզներ»ու Բ. շարքի վերջերգին, կը գրէ. «Այս գիրքը դու ես թելագրում, իմ երկիր, եւ ես պարզ մի գրամբեկնայ եմ, ձայնագրող ժապաւէն: Ուրեմն, նորից ձայնապարհ: Եւ նորից քեզ, Հայաստան»:

Արդի հայ գրականութեան մերօրեայ ուսանողը, երբ կը ծանօթանայ Վ. Պետրոսեանի ստեղծագործական բեղուն վաստակին, անպայմանօրէն պիտի մտապահէ նաեւ յաջողաբար լոյս ընծայուած իր վէպերն ու վիպակները, ինչպէս՝ «Վերջին Ուսուցիչը», «Մենաւոր Ընկուզներին», «Ապրած եւ Չապրած Տարիներ», «Դեղատուն Անի» եւ այլ երկեր, որուն նշանաւորագոյնը եղաւ «Կրակէ Շապիկ» եռամաս ընդարձակ վէպը (1986), հարուստ իր նկարագրային խճճանքներով ու քննադատութիւններով, ուղղուած սփիւռքահայ մեր իրականութեան ծնունդը եղող երեւոյթներուն: Արդարեւ, հայրենիքի մէջ ղեկավար դիրքերուն վրայ գտնուող շատ քիչ անձեր կային, որոնք լաւապէս գիտակ էին հայութեան սփիւռքեան կառոյցին ու հոգեբանութեան: Վարդգէս այդ փոքր խումբին կը պատկանէր, ու ճիշդ այդ պատճառով ինքզինքին թոյլ պիտի չտար յորդահոս ընթացքը իր սլաքներուն: Ներքին

գրաքննիչը գրագէտին, պարտուած դուրս կու գար միտքերու այս անհաւասար բախումէն, երկբեւեռ վերիվայրուամներէն: Ու հակառակ իր այս «մարդկային թուրութեան», տարագիր Սփիւռքի մեր կեանքին, հոգեբանութեան, երազին ու տենչերուն, եւ ընկերային գաղափարախօսութեան նուիրուած «Կրակէ Շապիկ»ը կոթողային վէպ մը ըլլալէ չի դադիր, ան՝ որ նախապէս իր ամսագրային առաջին տարբերակով կոչուած էր «Դատարկ Աթոռներ Մննդեան Տօնին» (տես «Սովետական Գրականութիւն» ամսագրի 1986-ի համարները), որուն վերամշակուած ու փոփոխութիւններու ենթարկուած տարբերակն էր նոյն տարին իսկ 600 էջի սահմանի մէջ լոյս տեսած ստուարածաւալ եռամաս այս հատորը, որ անվերջ մենախօսութիւնն էր հեղինակին, իր դրական թէ բացասական կերպարներով, բանավէճերով ու եզրայանգումներով: Ինք ներկայ է որ բոլոր «հերոս»ներուն մէջ, ինքն է բեմադրիչն ու բեմադրարարը, իր փափաքով է որ անոնք կը վիճին ու կը հաշտուին, կը սիրեն ու կը սիրահարին, կ'երգեն կամ կը մերժեն երգել («Քելէ լաօ, քելէ էրթանք մըր էրկըր...»):

Կարճ՝ այս վէպը, հեղինակին գիտակցական կեանքի ու գրական կենսափորձի ամբողջ ճանապարհին հանրագումարն է, իր ազգային գաղափարախօսութեան եւ հաւատքի քննութիւնն է, իր կեանքին վէպն է: Գրած է 1983-86 տարիներուն: Սակայն, գրելէ առաջ, ան ապրած է իր վէպը անձնապէս: Հոն արտայայտած գաղափարներուն մենք հանդիպած ենք ոչ միայն իր առօրեայ գրոյցներուն ընթացքին, այլեւ՝ «Հայկական էսքիզներ»ուն մէջ եւ իր հրատարակային ելոյթներու ընթացքին: Պատահած է նաեւ, որ կրկնութիւններու տժգունութիւնը տկարացնէ թափը իր թուիչքին եւ ազդեցութիւնը խօսքին:

1986-ին իր գոյգ տարբերակներով, Վ. Պետրոսեանի այս եզակի գործը, նոյն եւ յաջորդ տարիներուն իսկ հայրենի եւ սփիւռքահայ գրական մամուլի էջերուն տուաւ առատ նիւթ թեր ու դէմ կարծիքներու շարունակմով (տեսնել նաեւ սոյն տողերը ստորագրողին գոյգ յօդուածները՝ «Չարթօնք»ի 6 Մայիս եւ 21 Հոկտեմբեր 1987-ի համարներուն մէջ): Արդարեւ, 1986-ին իր աւարտին հասած այս վէպը, իսկական դիմագիծը կու տար իր ժամանակին ու մարդերուն: Մինչ հեղինակը կը սարքէր անհեթեթ բեմադրութիւններ, որոնք կը վնասէին իր իսկ ազգային-ընկերային վարքագիծին: Այդ յօդուածին մէջ, կը մատնանշէինք հետեւեալ կէտերը.

- Հայ ժողովուրդին ճակատագրական աշխարհագրամասը:
- Եղեռնը՝ իր արհաւիրքով:
- Հողային մեր անժամանցելի դատը:
- Հայ եւ թուրք մերձեցումներ, - անհաշտ պայքար, ներսում, մոռացում, ուրացում:
- Հայրենիքի ներկայ իրականութիւնը:
- Սփիւռքը այնպէս՝ ինչպէս

Մարք էջ 18

massispost.com  
daily news updates







**Աչքը լռյա Կլենտէյլի  
մեր քարեկամներուն**

**Կլենտէյլի մէջ  
բացուած է արդէն  
Մեր 4րդ մասնաճիւղը**

**ՁԵՐ ՄՕՏ ԿՈՒ ԳԱՆՔ -  
ՁԵՋՄՈՎ ՀՊԱՐՏ ՈՒ ԵՐՋԱՆԻԿ**

**708 S. Glendale Ave.,  
(818) 649-1090**



# ԱՌԱԲԵԼԱԲԱՐ ԽՕՍԻՆՔ ՀԱՅ-ԹՈՒՐԷ ԵՒ ՀԱՅ-ԱԶԵՐԻ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ...

## Շարունակում է 1-ին

թեան: ՊԷտֆէր հաստատուէր ժողովրդավարութիւն, սահմանադրական արդար եւ յուսադրիչ կեանք:

Թունուգի, եգիպտոսի եւ Եմբեմի մէջ յարաբերաբար միատարր ընդդիմութիւն կար: Արձանագրութեան որոշ ձեռնարկներ: Թունուգ ունեցաւ ընկերային բարեփոխումներ: Եգիպտոսի նախագահը հետազոտեցաւ իր պաշտօնէն, ախտորոշեցաւ եւ եմբակայ դարձաւ դատավարութեան: Լիպիոյ նախագահը անարգ կերպով սպանուեցաւ, եւ երկրի իշխանութիւնը անցաւ ժողովուրդի ձեռքը, որ տակաւին երկար նամբայ ունի կտրելի:

Տարաայի պարզ աշակերտական ցոյցերով սկսած բարեփոխութիւններ պահանջող սուրիական երիտասարդական շարժումը երկիրը ֆանդուիմի, ժողովուրդը արեան մէջ խեղդող ու արտահոսքի մատնող Արաբական Գարուն- իշխանութիւն արիւնաբամ ընդհարումներու վերածուեցաւ: Այդ ընդհարումները, այսօր, կը բոլորեն իրենց աւելի քան տասնութերորդ ամիսը, եւ տակաւին, համաձայն Դեսպան Էտուրբտ Չէրէնեանի, Սուրիա կը մնայ նոյն դժնդակ կացութեան մէջ: Աւելին՝ ահաբեկչական օտար ուժեր կը ներգրաւուին սուրիացի ընդդիմութեան շարժումը կողմէն, ինչ որ ցոյց կու տայ ընդդիմութեան մէջ միատարրութեան բացակայութիւնը: Հակառակ անոր, կը մտածուի թէ՛ նախագահ Պաշար Ասատի իշխանութիւնը հասած է իր աւարտին տակաւին, Սուրիոյ ապագան մոայլ կը թուի մնայ:

Մինչ, արժանական ուժով զինուելու ծրագիրը կը հետապնդէ Պարսկաստան, ԱՄՆ եւ իր դաշնակիցները վտանգաւոր գտնելով անոր ձեռնարկները ահաբեկչական եւ ծայրայեղական պարսիկ իշխանութիւններու կողմէ՝ օրակարգի վրայ դրուած կը թուի ըլլալ ռազմական միջամտութիւն մը, կանխարգիլելու համար տարածաշրջանի ապահովութեան սպառնացող այդ ծրագրի յաջողութիւնը, որ ժամանակաւոր պիտի ըլլայ, այն իմաստով, որ Պարսկաստան ուշ կամ կանուխ պիտի տիրանայ այդ ումիքին...

Ամերիկահայ համայնքը, մտահոգ Միջին Արեւելէն ներս տիրող դժնդակ պայմաններուն՝ անշուշտ կ'ուզէր իմանալ, եթէ Հայաստան ինքեւ կրնար եմբակայ դառնալ «Արաբական Գարուն» վերիվայրումներուն: Հայագրի ֆաղափարտը հաւանական կը գտնէր միայն մագլցումներ եթէ առաջին չ'առնուի գործարկութեան, մէկ միլիոնի հասնող աղֆատութեան, յուսահատ զանգուածներու արտագաղթին եւ ոչ-ժողովրդավարական կարգավիճակի վերացման: Անկախ տիրող ներքաղաքական վտանգա-

ւոր կացութեան, Հայաստան կը գտնուէր Ատրպէյճանի հետ հաւանական զինեալ առնակատման ազերի սպառնալիքին առջեւ, այսպէս կոչուած 1994-ին ստեղծուած զինադադարի 10-րդ տարեդարձի աւարտին:

Արդարեւ, Ատրպէյճան, հայոց կողմէ «գրաւեալ» հողերուն վերատիրանալու ծրագիրը պիտի իրականացնէր նոր պատերազմի մը փոխընդարձակ: Պր. դեսպանը կը գտնէր, թէ գալիք այդ պատերազմը ազերի յաղթանակով մը պիտի աւարտէր: Իր այս իսկ գնահատութեամբ, հայագրի ֆաղափարտը խորհուրդ կու տար Հայաստանի Հանրապետութեան, շուտով նախաձեռնելու բանակցութիւններու գրաւեալ կնիքոտ հողերու հարցը, մի անգամ ընդմիջող լուծելու համար...

Տակաւին կար Հայաստանի դէմ Թուրքիոյ կողմէ գործադրուած շրջափակման պարագան, որ ոչ միայն ննչումի տակ կը պահէր երկրի տնտեսական յառաջիակացիքը, այլ նաեւ՝ մեկուսացման տակ կը դնէր Հայաստանը: Այս երեւոյթը առաւել եւս շեշտուած կը գտնէր Պրն. Դեսպանը, Պաֆու Չէրէնեան կազի խողովակաշարի անցքերու ծրագրէն դուրս մնալուն պատճառով: Պրն. Չէրէնեան հրամայական կը գտնէր, նաեւ կրկին անգամ, Թուրքիոյ հետ բանակցութեան նստիլը, իր սահմանները բանալու համար դրացի բոլոր երկիրներու հետ, հետեւելով Նելսոն Մանտելայի օրինակին...

Տարակոյս չունէինք, որ Պրն. Էտուրբտ Չէրէնեան ԱՄՆ-ի ֆաղափանկութիւնը պիտի փորձէր ընդհանրացնել հայկական բեմէն, ֆազգիտնալով հանդերձ, որ որեւէ բանակցութիւն հիմնուած կ'ըլլայ փոխադարձ զիջումներու սկզբունքին վրայ: Ի՞նչ տարողութեամբ վստահութիւն ունի արդեօք Պրն. Քաղափազէտը, որ դոյզն գիջում մը կատարելու տրամադիր է ազերին, երբ տիւ եւ գիշեր, հողային ամբողջականութեան մասին կը ճառէ Ելիամ Էֆենտի Ալիբե: Նոյն հարցադրումը կատարեմք Թուրքիոյ հետ սահմանները բանալու կապակցութեամբ: Կը մտածուի՞ արդեօք, որ Թուրքիան յօտարի վերցնել հայաստանի շուրջ հաստատուած շրջափակումը, բանայ Հայաստան-Թուրքիա սահմանները, որ պէտքի Հայաստան գարկ տայ իր տնտեսական վերելիքին, առանց բացայայտ եւ կամ ընդլայտակեայ օրակարգէ դուրս ձգելու Ցեղասպանութեան իր կողմէ նանաչման պահանջը: Այս բոլորէն ետք հարցում մը Հայագրի՝ ԱՄՆ-ի որակաշատ ֆաղափարտ էտուրբտ Չէրէնեանին.

- Ինչո՞ւ իր այս բելադրութիւնները մտերմաբար, որոշակի չուղղէր ուղղակի՝ Հայաստանի իշխանութիւններուն: Արդեօք՞ այն ինչ որ հայրենի ապագան է, նախօրօք վնասուած կրնայ ըլլալ:

# ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ

## Շարունակում է 14-ին

նում է աւատրիացի լրտեսի արիւնով ներկուած նմուշ, որը վերջինս յանձնում է Հանսին 100 հազար տոլարի դիմաց:

Հեղինակը Հանսի փիլիսոփայական մտեցումով արտայայտում է իր դժգոհութիւնը «խուլ ականջներին» և «կոյր աչքերին», որոնց թի տակ կոտորուում վերանում է ազգը, որը տիպական է ոչ մի կենդանու. կենդանին իր սերի ներկայացուցին չի սպանում: Մարդն իր մտային կարողութեամբ կենդանուց աւելի դազան է եւ անհանդուրժող...:

Հեղինակը Հանսի միջոցով դիտորութիւն է անում նաեւ Երեւանից Սուրբ Էջմիածին տանող ճանապարհի եզրերին կառուցուած խաղատների մասին, որոնք մարդուն պարզապէս չեղելու, կեղծ յոյսով մոլորեցնելու վայրեր են: Ես կ'աւելացնէի նաեւ, որ շատ դէպքերում էլ մարդու ընտանիքը քայքայող և ապագան կամ կեանքը խորտակող «գրախտներ» են:

Մի ալ հարց է Հանսի տղայի՝

# 80-ԱՄԵԱՅ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

## Շարունակում է 16-ին

որ է:

- Հեռանկարներ եւ եզրակացութիւն:

Մեկնելով մեր այս հարցադրումներէն, կը հաստատենք, թէ պէտք է ընդունինք, թէ վարդգէս Պետրոսեան իր ժամանակի քաղաքական մտածողութեան մէջ (ընկերակցութեամբ իր պատանեկան շրջանի դպրոցակից՝ պետական բարձրագոյնիկ գործիչ ու իրեն ճակատագրակից կարէն Դեմիրճեանի), հանդիսացաւ բացառիկ երեւոյթ մը: Մտքի մաքառումներով զրեց իր տասնեակ մը վէպերը: Նոյն տաղանդով ու կիրքով՝ ստանձնեց ու վարեց բարձրագոյն պաշտօններ: Հասաւ արագածանման կատարներուն եւ այդ բարձունքէն երբ աչքերը յառեց անոնց ստորոտին, տեսաւ ու հաստատեց գոյուլթիւնը կեանքի առեղծուածային վիճերուն, որոնց մէջ օր մը թաւալազլոր պիտի գտնէր տարբախտ զրազէտի իր վախճանը:

Իսկ այսօ՞ր, սիրելի ընթերցող, երբ ներկայ ժամանակը կը յուշէ մեզի իր կեանքին 80-ամեակը, եւ ինք կը բացակայի ֆիզիքա-

Յոհանի ընկերուհու մօտ ԶԻԱՀ-ի (պիտի) յայտնաբերումը և Հանսի ընտանիքի որոշումը՝ ամբողջ ընտանիքով ատուգուելու մասին: Այդ թուում ատուգուում է նաեւ Հանսի աղջկայ՝ Լինդայի ընկերը՝ Էրվինը, որի մօտ յայտնաբերում է ԶԻԱՀ-ը, որի պատճառը պարզուած է 6 ամիս առաջ նրան վարակուած արիւն ներարկելն է եղել:

Հեղինակը սահունօրէն է կապակցում իրադարձութիւնները միմիանց հետ: Նա աշխատում է բոլոր հարցերում Հայաստանը ներկայացնել որպէս այն փարոսը, որը համարեա բոլոր ոլորտներում կարող է օգնել մարդկութիւնը: Այստեղ էլ նա հպարտութեամբ է նշում Հայոց երկիրը, որ նրա մայրաքաղաք Երեւանում ԶԻԱՀ-ի բուժման համար յայտնաբերուած է «Արմենիկում» դեղը, եւ «Արմենիկում» բժշկական կենտրոնում ձրի են բուժում հիւանդներին: Էրվինը սկսում է իր բուժումը այդ կենտրոնում: Հանսը խոստանում է նուիրատուութիւն անել կենտրոնին:

(Շարունակելի)

պէս մեր տեսողաշտէն ու մեր գրական հանդիպումներէն, մեր ընդվզումը կը յայտնենք հետեւեալ բառերով.

Մարդ արարածը կը ծնի ու կ'ապրի իբրեւ բնութեան մէկ պարգեւը: Անոր կեանքի վախճանին տնօրինումը գոհ պէտք է դառնայ մարդասպանական եւ ահաբեկչական արարքներու: Յոռեղոյնը դատական վճիռներուն՝ ցմահ բանտարկութիւնն է: Մանաւանդ, երբ հայանուն մարդերու եղբայրասպան գնդակներու գոհ կ'երթան վարդգէսին մինչեւ կարէն, վազգէն ու վահէ:

Հայ մարդեր, վերանկախացած մեր մայր հայրենիքի հողին վրայ... դժբախտաբար կը վայելին պաշտպանութիւնը անձեռնմխելութեան եւ անպատժելիութեան: Յանուն պատմական ճշմարտութեան, վերջին 20 տարիներուն հայրենի հողին յանձնուած գոհերուն ու դահիճներուն ցուցակագրումը կը պահանջենք, առ ի դատապարտութիւն արարքին եւ կանխագոյնացում՝ անոնց կրկնութիւններուն:

Արդա՞ր է մեր պահանջը: Ամէն ոք՝ թող հարց տայ իր խղճմտանքին:

**ՎԱՐԶՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՅԵՐՈՒ ՀԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ԱՆՆԱՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 7797-A GAS RANGES AT HACLA HOUSING DEVELOPMENTS**  
The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for Gas Ranges at Housing Developments. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Non-Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 1:00 P.M., Pacific Daylight Saving Time, October 22, 2012  
10/18, 10/25/12  
CNS-2389214#  
MASSIS WEEKLY

**ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ**  
Մի ոմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

**«ԳԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ 70**  
**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէնտլի 380-րդ կայանից**



### ՄԱՐԿ

#### ՎԱՐԴԻԴԵՐ ՕԳՆԱՅԵԱՆ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆ (Ծնեալ 1921 Մերսին թուրքիա)

Խոր ցաւով կը գուժենք մեր մօր եւ մեծ մօր ՎԱՐԴԻԴԵՐ ՕԳՆԱՅԵԱՆ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆի մահը որ տեղի ունեցաւ Չորեքշաբթի, Հոկտեմբեր 10, 2012, Դամասկոսի մէջ:

Սգակիրներ՝  
Դուստրը՝ Մարի եւ Նորայր Խաչատուրեան եւ զաւակները  
Դուստրը՝ Ասողիկ Պարուսալեան  
Զաւակը՝ Ժիրայր եւ Դրէյս Պարուսալեան եւ զաւակները  
Թոռնուհին Վարդենի եւ Զաֆեր Ֆարահ եւ զաւակները Պաթոն Ռուժ  
Թոռները՝ Աբրահամ եւ Փիեռ Պարուսալեան, Պաթոն Ռուժ Եղբայրը՝ Կարպիս Օգնայեան եւ զաւակները Լոս Անճելոս Քոյրը Մատլէն եւ Կիտօ Պէրդամիւնի եւ զաւակները Մէրսին, թուրքիա  
Եղբայրը՝ Յարութիւն եւ Ռոզ Օգազան եւ զաւակները Մէրսին, թուրքիա  
Եւ համայն Պարուսալեան, Օգնայեան, Խաչատուրեան, Պէրդամիւնի, Օգազան ընտանիքները եւ հարազատները:

### ՅԱԿՎՅԱԿԱՆ

ՎԱՐԴԻԴԵՐ ՕԳՆԱՅԵԱՆ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆի մահուն տխուր առիթով «Մասիս» իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեանին, Տէր եւ Տիկ. Միհրան Խաչատուրեանին եւ Տէր եւ Տիկ. Սեւակ Խաչատուրեանին եւ համայն հարազատներուն եւ պարագաներուն:

### ՅԱԿՎՅԱԿԱՆ

ՎԱՐԴԻԴԵՐ ՕԳՆԱՅԵԱՆ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆի մահուն տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութի եւ Ազնիւ Բաբերեան կը յայտնեն իրենց խորագգաց ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Խաչատուրեան ընտանիքին: Առ այդ \$50 կը նուիրեն «Մասիս»ին:

## ԷՏՈՒՐՈՏ ԵՐԵՒԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՕՐԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՏԱԳՆԱՊԸ

Շարունակուած էջ 7-էն

ընկերային, տնտեսական դժուարութիւններ գրեթէ ամէն տեղ կար, կաշառակերութիւն նոյնպէս: Պաղ Պատերազմի տարիներն էին:

- Հարցում. ո՞վ է յաջորդ թշնամին կոմունիզմէն ետք: Պատասխան. ծայրայեղականութիւնը եւ ակաբեկչութիւնը:

- Արաբ բռնապետները շատ մեծ գումարներ կը ծախսէին զէնք-զինամթերքի վրայ, ըսաւ հիւր դեսպանը եւ գրեթէ ոչինչ՝ բարելաւելու համար իրենց ժողովուրդին ընկերային, տնտեսական թէ կրթական վիճակը:

- Այսօր, ծայրայեղականները կ'օգտուին իրավիճակէն. այո, առնականալ է. ըսաւ դեսպանը, սակայն ներկայ մարտահրաւեր իսլամութեան եւ արեւմուտքի միջեւ է, այլ՝ քաղաքացիական պատերազմ է, պայքար է չափաւորականներու եւ ծայրայեղականներու միջեւ:

- Դեռ 1992-ին ձեռնարկէն ըսած է, որ ԱՄՆ-ը քաղաքականօրէն պէտք է գործակցի չափաւորականներու հետ, լուսանցքի վրայ պահելով ծայրայեղականները:

#### ՍՈՒՐԻԱ

- Սուրիան Լիպիոյ չի նմանիր: Ամէն մէկը տարբեր է: Սակայն Սուրիոյ իրավիճակը ամէնէն բարդն է: Մարտ 2011-ին Տարապի աշակերտական ցոյցերով սկսած բողոքի ալիքը կը կարծուէր թէ նախագահ Պաշար Ասատ գլուխ կը հանէ: Աստու վարչական բարեփոխումներ խոստացած է ջաճար, առանց գործնական քայլեր առնելու: Ամիսներ առաջ, Սուրիոյ ընդդիմութեան հետ հանդիպում

ունեցած է ձեռնարկէն, եւ ըսաւ թէ 15 հոգի նստած 10 տարբեր կարծիքներ ունէին. փաստօրէն, այսօր երկիրը կ'ապրի քաղաքական ճգնաժամ, ուր թէեւ ընդդիմութիւնը կը գործակցի, սակայն չկայ միասնական դիմագիծ:

- Չինաստան եւ Ռուսիա արգելք կը հանդիսանան, վեթօ կը դնեն ԱՄՆ-ի կողմէ ՄԱԿ-ի բոլոր բանաձեւերուն վրայ: Անոնք անտրամադիր են, որովհետեւ ամէն մէկը իր ներքին հարցերը ունի. օրինակ՝ Թիպէթ եւ Չեչենիա:

#### ՀԱՅԱՍՏԱՆ

- Հայաստանի նկատմամբ Միացեալ Նահանգներու դիրքորոշումն է պահել խաղաղութիւնը, ժողովրդավարութեան հաստատում եւ հետեւողական ան:

- Սփիւռքը պէտք է միասնական մը ըլլայ, որպէսզի իրական ժողովրդավարական պետութիւն հաստատուի Հայաստանի մէջ, նշեց ձեռնարկէն:

- Հայաստան ունի բոլոր հնարաւորութիւնները, որպէսզի դառնայ Կովկասի գիտական, կրթական եւ քաղաքական կեդրոնը, ժողովուրդին եւ մանաւանդ մտաւորականութեան ուշիմութեան շնորհիւ: Բայց այսօր տարբեր է իրավիճակը: Գործազրկութիւն եւ արտագաղթ, աւելի քան մէկ միլիոնի հասնող աղքատութիւն, կաշառակերութիւն:

- Կան նաեւ արտաքին խնդիրներ, որոնք ուղղակի թէ անուղղակի կ'ազդեն Հայաստանի վրայ: Օրինակ՝ Վրաստան-Ռուսիա յարաբերութիւնները, թուրքիա-Ատրպէյճան կապը, թուրքիոյ տնտեսական թէ քաղաքական ուժը շրջանին մէջ:

- Հայաստան ոչ մէկ ատեն կրնայ այսօրուան թուրքիան դառնալ շրջանին մէջ, մրցիլ անոր հետ, որպէս շրջանի ուժ:

- ձեռնարկէն անդրադարձաւ նաեւ Հայաստան-Իրան առողջ յարաբերութիւններուն:

- Ղարաբաղեան տագնապը «ստեղծուած տագնապ»ը կարելի է կոչել. բայց այդպէս պիտի չմնայ, ըսաւ ան: Հայաստան տիրեց ատրպէյճանական հողերու եւ որեւէ ատեն հայ-ազերի պատերազմը կրնայ վերսկսիլ (հարկ է նշել, թէ 1994-ին երբ գինադար յայտարարուեցաւ, հայկական ուժերը իրենց ձեռքին տակ ունէին նախկին ԼՂԻՄ-ի մեծ մասը, ինչպէս նաեւ ազատագրուած այլ տարածքներ, որոնք կը գտնուէին ԼՂԻՄ-ի սահմաններէն դուրս - Հ.Ս.):

- Ներկայիս, ռուսեր երկու կողմերն ալ կը գինեն:

- Իսրայէլ եւ թուրքիա նոյնպէս զէնք կը վաճառեն Ատրպէյճանի:

- Ազերիներու կողմէ պատերազմը վերսկսելու վտանգ կայ 2014-ին, ըսաւ դեսպանը: Իսկ թուրքիոյ մէջ նախագահ կրնայ գալ վարչապետ էրտողան:

- ձեռնարկէն նշեց, որ կամ՝ իրական յառաջխաղացք պիտի արձանագրուի ղարաբաղեան հարցով եւ կամ՝ պատերազմ:

- Ժամանակն է, որ Ղարաբաղեան տագնապի լուծումին հասնինք դիւանագիտական քայլերով: Մինաքի Խոմբը ոչ մէկ լուծում առաջադրեց, իսկ ժամանակը հայութեան կողմը է:

- Հայաստան պէտք է սահմանները բանայ իր բոլոր դրացիներուն հետ. ձեռնարկէն կարեւորեց այս երեք կէտերը՝ Դիւանագիտութիւն, երկխօսութիւն եւ հաշտեցում:

- Մերօրեայ հերոս Նելսըն Մանտելայի օրինակին հետեւելով աշխատիլ հասնելու քաղաքական հաշտեցման:

- Այսօր ե՛ւ մենք, ե՛ւ ամբողջ աշխարհը պէտք ունինք Նելսըն Մանտելայներու, բոլոր խնդիրներուն մէջ, որպէսզի քաղութիւնը ունենանք ձեռք երկարելու թշնամիին ու մրցակիցին: Ժամն է արժանապատուութեան եւ համաձայնութեան, ըսաւ ան:

- ձեռնարկէն եզրափակեց Հայաստանի մասին իր խօսքը, ըսելով, թէ իրեն համար, որպէս ամերիկահայ, կը փափաքի տեսնել խաղաղ եւ ապահով Հայաստան մը, իր բոլոր դրացիներուն հետ:

#### ՀԱՐՅՈՒՄ-ՊԱՏԱՍԽԱՆ

Դասախօսութեանէն ետք, ներկաները իրենց գրաւոր հարցումները ուղղեցին, որոնք համադրուե-

լով, Ասպետներու ատենապետ Տիրան ձեռնարկէն ներկայացուց դեսպանի խոսքը ձեռնարկէն (երկուքն ալ հանրային, նոյն գերդաստանի գաւակ): Կը ներկայացնենք պատասխաններէն փունջ մը.

- Ողջունելով աշակերտական ներկայութիւնը, քաջալերեց որ անոնք թափանցեն դիւանագիտական աշխարհէն ներս:

- Հայաստան-թուրքիա սահմանը բանալը միայն առեւտրական նպատակներու համար է: Ներկայիս Հայաստան կը գտնուի շրջափակման մէջ, թէկու՞ խոր՝ հրդանշական: Ան լեզու պէտք է գտնէ իր դրացիներուն հետ եւ Ռուսիան պէտք է ըլլայ միակ պետութիւնը, որմէ կախեալ ըլլայ Հայաստանի ապագան: Պաքու-ձեռնարկէն կազմ խորհրդակաշարին Հայաստանէն չանցնելը, մեր երկիրը մեկուսացնելու պարագայ մըն է, դիտել տուաւ ան:

- Իրանի մասին. Հարուստ անցեալ ունեցող երկիր, որ այսօր հիւլէական ռուժի պատրաստութիւն կը տեսնէ, ինչպէս նաեւ կը վարէ անվստահելի արտաքին քաղաքականութիւն՝ գործակցելով ծայրայեղականներու, Հզպալլայի եւ Համասի հետ: Իսրայէլի կամ Միացեալ Նահանգներու յորձանկուծ իրանի վրայ կրնայ ուշացնել հիւլէականի ծրագիրները, սակայն պարագայ կ'ուշացնէ, եւ ոչ թէ կ'արգիլէ: ձեռնարկէն կարծիքով Ամերիկա պէտք է անապարէ պատերազմելու իրանի դէմ:

- Ղարաբաղի ապագային մասին խօսելով, ձեռնարկէն Արցախը կը տեսնէ քաղաքականօրէն Հայաստանին կապուած, հողերու փոխզիջումային տարբերակով մը:

Դասախօսութեան աւարտին, Ասպետներու ատենապետ Պրն. Տիրան ձեռնարկէն մեծապէս շնորհակալութիւն յայտնեց դեսպան ձեռնարկէն եւ յուշանուէրով մը պատուեց զայն:

Ներկաները սրահէն դուրս եկան նոր հարցադրումներով, քիչ մը աւելի լրջացած, քիչ մը աւելի քաղաքական հոտառութեամբ լիցքաւորուած, անգամ մը եւս հասկնալով, որ որքան հեռու պէտք է պահել զգացականութիւնները, երբ գործ ունինք քաղաքական ու դիւանագիտական աշխատանքներու հետ: Բոլորս ալ կը սիրենք Հայաստանը, կը սիրենք նաեւ Միջին Արեւելքը, սակայն ձեռնարկէն սորվեցուց չոր իրականութիւններու դէմ յանդիման գտնուելու եւ հեռուն տեսնելու քաղութիւնը: Անոր խօսքը թող արթնութեան հրաւեր մը ըլլայ հոսկէ Հայաստան ու Միջին Արեւելք:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net



125

SOCIAL DEMOCRAT  
HUNCHAKIAN PARTY  
THROUGHOUT  
HISTORY

# ACADEMIC CONFERENCE

Dedicated to the  
125th Anniversary of the  
Social Democrat Hunchakian Party

## PARTICIPANTS

- PROF. RICHARD HOVANNISIAN
- PROF. GERARD LIBARIDIAN
- PROF. KEVORK BARDAKJIAN
- PROF. ARA DOSTOURIAN
- PROF. ARA SANJIAN
- PROF. HRATCH TCHILINGIRIAN
- DR. GARABET MOUMDJIAN
- PROF. VAHRAM SHEMMASSIAN
- DR. VARTAN MATIOSSIAN
- REV. DR. ABEL MANOUKIAN
- MR. ARAM ARKUN

## CO-SPONSORS

RICHARD HOVANNISIAN ENDOWED  
CHAIR IN MODERN ARMENIAN  
HISTORY AT UCLA  
Los Angeles, CA

ARMENIAN RESEARCH CENTER AT THE  
UNIVERSITY OF MICHIGAN  
Dearborn, MI

WOODBURY UNIVERSITY  
Burbank, CA

NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN  
STUDIES AND RESEARCH  
Belmont, MA

## ORGANIZED BY

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION (A.E.B.U.)  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION (N.S.C.A.)

**SATURDAY**  
**OCTOBER 27, 2012**

9:00am - 5:00pm

**WOODBURY UNIVERSITY**

7500 North Glenoaks Boulevard Burbank, CA

 LIVEWEBCAST

for more information please visit our website  
or scan with your mobile device

[www.sdhp125.org](http://www.sdhp125.org)



Seating is limited. Reservation recommended.

email: [info@sdhp125.org](mailto:info@sdhp125.org)

1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104 Tel.: 626.398.0506

FOLLOWING THE CONFERENCE **Dinner/Discussion with the Academics**  
Donation: \$100/person